

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՋԳԻՆ ԴԷՍ

Թրքական բռնակալութեան ու հալածանքներուն զեմ-
 Լա Հէյի համաժողովին բողոքագիրներ տեղացին Եւրո-
 պայի ու Ամերիկայի հայ զաղթականութիւններէն, նմա-
 նապէս շատ կարեւոր յիշատակագիր մըն ալ կ'ըլլայ Պոլսոյ
 ազգային մարմնի մը կողմէ: Գիմուսներէն անմիջա-
 կան ո՛ր եւ է շօշափելի օշուտ շէնք սպասեր. Ժո-
 դովին աշխատութեանց սահմանները զծուած ըլլալով ա-
 նոնցմէ զուրս ելլել ներքի չէր, ուստի յստախարութիւն
 շիրեցիներ: Մեր նպատակն էր միայն թող շտալ որ հայ-
 կական խնդիրը երբեք ժամանակազանցութեան ենթարկ-
 ուի. ու միշտ եւ ամէն տեղ հայկական կոտորածներուն
 ուրուականը իրենց աչքին առջեւ պէտք է տեսնեն պեաւ-
 թիւները: Մեր բողոքները ուրեմն գատապարտուած կ'ին,
 դոնէ անտականին մէջ, անողորելի «ոչ կարեմը» ին բաղ-
 խիլ, և սակայն զողը առաւ սուլթանը: Ահեղ Գերմանիան
 իրեն կրնակ ունեցող Համարը վախցաւ թուլութեամբ զեղին
 եւ Ժողովին մէջ ձայն չունեցող Հայու մը Լա Հէյ ներ-
 կայութենէն: Սուլթանին այս սարսափը ինքնին պատշոյց
 մըն էր թէ հայ արիւնէն բղիտած ձայնը կրնայ ազդել
 արեւելքի ներկայացուցիչներուն բարոյականին վրայ:
 Միանգամայն այս ամթիւ Հայաստանի բողոքները մա-
 մուլի միջոցաւ նորէն արձագանդ կը գտնեն աշխարհի ա-
 մէն կողմը եւ կը յիշեցնեն թէ հայ ազգը ոչ իր ազլանե-
 րը մտոցած է եւ ոչ ալ իր պահանջումներէն հրաժարած:

Ազգային այս հոգեբանական ճգնաժամին կ'ըլլայ Պոլսոյ
 պատրիարքը Օրմանեան Մաղաքիա եպիսկոպոս Համա-
 ժողովին հեռագիր մը ուղղելով կը բողոքէ արտասահմա-
 նի Հայոց Համաժողովին գիմուսներուն զեմ: Հեռագիրը
 Պոլսն զարնուելէն անմիջապէս ետքը, խօսելու իր սուտնը
 ունեցող ազգային մարմինը Թրքական հոգէն իսկ հետեւ-
 եալ բողոքագիրը կը հասցնէր Համաժողովին նախադահին:

«Կը տեղեկանանք որ Հայոց պատրիարքը, Տ. Օր-
 մանեան, դաւանանք իր ազգին, հեռագրած է Լա Հէյի Հա-
 մաժողովին թէ՛ անհասանք կրնան Համաժողովին պատ-
 դաւաւորներուն յիշատակաղիր ներկայացնել հայկա-
 կան խնդրին վրայ, բայց այդ անհասանքը ո՛ր եւ է տխու-

ղոս չունին ազգը ներկայացնելու, եւ ոչ իրաւասութիւն
 ունին, ո՛չ ալ պաշտօն, յանուն ազգին խօսելու, հետեւ-
 ւաբար պէտք չէ անոնց լսել:

«Ուրեմն երբ մենք քաղաքակիրթ աշխարհին ատեա-
 նը կը հանենք մեր ժողովրդին մարտիրոսութիւնը եւ ահ-
 ոելի ոճիրները սուլթան Ապաիւ Համիտի, երբ մենք կը
 յիշեցնենք երբեք հարիւր հազար հայու ջարդը խաղաղու-
 թեան ժամանակի մէջ, երբ կը ծանօթացնենք ամբողջ
 ցեղի մը մէթոսիկ ջնջումը նորանոր կոտորածներով՝ ու-
 թոնք զրեթէ հանապազօրեայ են, եւ պաշտօնապէս կաղ-
 մակերպուած սուլու միջոցաւ, մենք պաշտօն չունինք եւ
 զեր յանուն ճշուած ազգին խօսելու:

«Մենք սակայն պիտի խօսինք և մեր պետերուն նման
 անխիղճ դաւակիցները պիտի չըլլանք թագապսակ մար-
 դասպանին, ծածկելով աշխարհի աչքէն անոր արիւնս-
 գանդ ոճրագործութիւններուն քստմելի ցանկը:

«Պէտք է վերջապէս դիտցուի թէ մերիններուն օր մը
 խմբովին, օր մը առանձինն առանձինն կոտորածին վկա-
 ներ ըլլալէ յոգնած ենք: Չենրնկեցութեան Համաժողովը
 եթէ յարմար չի գտներ զինաթափ ընել Երլարզի վայր-
 պազանը, յուսահատութիւնը կրնայ մեզի վրէժնորու-
 թեան մղել: Եթէ ողբերգական զկրքեր տեղի ունենալով
 Արեւելք, վտանգեն արեւելքական խաղաղութիւնը, պա-
 տախանատուութիւնը պիտի շժանրանայ մեր վրայ այլ
 անոնց վրայ որոնք իրենց պղերութեամբը սուլթան Հա-
 միտին թոյլ տուին նահատակել ի բնէ խաղաղասէր ժողո-
 վուրդ մը:»

Օրմանեան եպիսկոպոսին պատրիարքական պաշտօնը
 եթէ ոչ զեռ նիւթապէս բայց գոնէ բարոյապէս այլ եւս
 վերջացած կրնանք համարել իր այս գաղտնածածուկ գա-
 ւապրութեամբը: Ընդհանուր հայ ազգը, առանց բացա-
 ութեան, այսօր միաբան է Օրմանեանի անկումը եւ պա-
 տիժը վճռելու համար: Որքան ատեն որ այդ եկեղեցյա-
 կանը կը բաւականանար յայտարարելով թէ յեղափոխու-
 կան միջոցները Հայաստանի բարեկարգութեան խնդիրը
 ո՛չ կ'ապահովեն եւ ո՛չ ալ կը զիրարացնեն, ընդհակառակը
 աւելի կը վտանգեն կամ կը դուրարացնեն, կրնար են-
 թաղրել թէ գոնէ մաս մը Հայեր ալ, որոնք պահպանու-
 զական կուսակցութիւն անունով կը ծանչցուին, իրեն հա-
 մակարժիք գտնուելով սե՛ս պիտի տան իր քաղաքականու-

60
-161

Թիանը և իր ապաւենները պիտի բլլան. բայց այն օրը որ Օրմանեան երրօրական պետութիւններու խաղաղասիրական զիմուսի սկզբունքն իսկ կը կոխկրտէ, այն օրը այլ եւս ազդին մէջ կուսակից չունի: Նոյն իսկ այն Հայերը որ հաշտաչքով շեն գիտեր յեղափոխական շարժումը, իրենց յոյսը Երրօրայի վրայ դրած են, ու կը հակառակին այն ամէն զիմուսներուն որ ոյզ ապաւենը ազգին կռակէն հեռացնելով հայ ժողովուրդը՝ բոլորովին անպատասպար՝ սուլթանին յանձնելու կը նկրտին: Հայաստանի բարեկարգութիւնը երրօրական միջամտութեամբ ապահովելու սկզբունքին բարեկամներն են ահա որ իրենց գաղափարներուն մէջ վրդովուած, իրենց զգացումներուն մէջ վիրաւորուած, շեն վարանիր Օրմանեանը ազգային շահերուն դաւադիր մը հռչակելու: Հայ ազգը այսօր ամբողջութեամբ միտքան է Օրմանեանի դէմ:

Օրմանեան չկրնար ինքնաբերականօրէն այն պատրուակին զիմել թէ սուլթանին հանդէպ հաճոյակատարութիւնը այս պարագային մէջ անխուսափելի հարկ մըն էր մեծապոյն շարիքներու խափանումին համար: Այն պահուն որ Հայոց պատրիարքը Լա Հէյի Համաժողովին զարկած հեռագրովը ալ բոլորովին զինաթափ կը մնար սուլթանին առջեւ, նոյն պահուն Երբտրդի պալատէն Մուշի կոտորածին, հայ եկեղեցիներու և վանքերու թալանին հրամանը կը տրուէր: Եթէ պատրիարքը սխալ բայց անկեղծ համազումով մը զարկած ըլլար այդ հեռագիրը, իր պարտականութիւնն էր Մուշի կոտորածին լուրը հասնելուն պէս կարուկ բողբոջով մը հրամարիլ առանց վերադարձի ճամբայ մը ետին բաց ձգելու: Պարտաւոր էր յայտարարել թէ սուլթանին հրամաններուն հնազանդելով ազգին օգուտ մը յուսացած էր, ու փոխարինութիւնը նոր կոտորած մը կ'ըլլար:

Բայց Օրմանեան չէր կարող համարձակիլ այսօրինակ բողբոջարկութեան մը: Երեք տարուան պաշտօնախարութեամբը սուլթանին համար մաստիպար պատրիարք մը եղաւ: Անոր հաճոյակատարութեան հովանիին առի սուլթանը իր քաղաքականութիւնը շարունակեց, լաւագոյն գառնի մը արժանի հաստատումութեամբ: Կոտորած, հալածանք, արհեստական սով, բանտարկութիւն, տանջանք, ազգային ամէն իրաւունքներու բռնաբարում, ահա երեք տարուան հաշուեկշիռը:

Հայ ժողովուրդը զիտնալով Կ. Պոլսոյ կացութիւնը չէր սպասեր, եւ ոչ ալ կը պահանջէր, պատրիարքին կողմէն Լա Հէյի Համաժողովին զիմում մը. բայց երբ ազգը ինքն այդ զիմումը կ'ընէ, պատրիարքին համար գոնէ չէզոքութիւնը ամենատարրական պարտականութիւն մըն էր: Խելացի պատրիարք մը պիտի կրնար օշաուիլ ազգին այս միահամուռ բողբոջէն, եւ այդ զիմումը իբր ճնշում գործածել սուլթանին վրայ, անոր ճիրտներէն խլելու համար ինչ որ կրնար:

Պատրիարքը հայ ժողովուրդին կը զլանայ մինչև իսկ բողբոջի իրաւունքը: Կոտորուողը՝ ժողովուրդը, խեղճ ու թշուառ եղողը՝ ժողովուրդը, աստանդական թափառսյաժը՝ ժողովուրդը,

ուրդը, ու և ոչ իսկ ճիկ մը արձակելու իրաւունքը պէտք է ունենայ: Ժողովուրդը այն ատեն լուռ կը մնայ երբ պատրիարքը ազգին զգացումներուն արձագանքը կուտայ, դաւաճափարներու թարլմանը կը ներկայանայ: Երբ Հայոց պատրիարքը Ներսէս Վարժապետեանն էր, հայ ժողովուրդը բողբոջելու իրաւունքը չգործադրեց, վասն զի պատրիարքը ինք կը խօսէր: Օրմանեան եպիսկոպոս որ Ներսէսի ժամանակուան քաղաքական ամէն անցքերուն լաւասեղեակ է, պէտք էր յիշէր թէ նոյն իսկ սուլթանը ընդունած է ժողովուրդին բողբոջարկութեան իրաւունքը: Գուրբ այն ատեն — Պերլինի վեհաժողովին երկու երեք տարի վերջը, ծանուց զիտպաններուն թէ Ներսէս պատրիարքի բողբոջները և պահանջումները լուի իր անձնականներն են. ժողովուրդը ո՛չ պահանջում ըրած է, եւ ո՛չ ալ բողբոջ:

Համաժողովի գումարուած պետական անձնատարութիւնները անտարակոյս արհամարհանք և նողկանք պատգին բարձր ստաիճան եկեղեցականի մը հաւտ որ աշխարհի խղճմտանքը վրդովուող բարբարոսութիւնները կը վաւերացնէ բողբոջելով իր ժողովուրդին արիւնսուղ բողբոջին դէմ: Տխուր բան մըն է մտածել որ հայ եկեղեցականութիւնը օտար ազգերու աչքին այս աստիճան պղտիկցած կ'երևի: Ու այդ եկեղեցականութիւնը իրաւունք սննի համակրութիւն պրաւելու: Ինքք իր ազգէն զաւ չէ. անոր սակորէն, անոր արիւնէն է, ու իր սակորները ժողովուրդին սակորներուն հետ մէկտեղ կտարտուեցան, իր արիւնը ժողովուրդին արիւնին հետ խառնուած վազեց. բանաւր, աքսորը իրեն համար ալ եղան, ու ինքն ալ կը տանջուի, կը շարձարուի: Քրիստոսնէութեան առաջին դարերու էն պանծալի օրերուն արժանաւոր եկեղեցականներ ունեցաւ և սննի հայ ազգը:

Ու Օրմանեան եպիսկոպոս գոնէ իբր անգամ եկեղեցիի սրտածնէութեան, իր պատրիարքի յատկութեամբը անոր պատուին աւանդապա՛ը բլլալու խղճահարութիւնը ունենար:

Ըստած է թէ ամէն ժողովուրդ իր ունեցած կամ սխարութեանը արժանաւոր է. ո՛չ հայ ժողովուրդը, ո՛չ ալ իր եկեղեցականութիւնը Օրմանեանը իրենց կառաւարիչ ունենալու դատապարտութեան արժանաւոր են:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ Կ. ՊՈԼԻՍ

Կ. Պոլսոյ վերջին կէս դարու սերունդները կ'ամբաստանուին Հայաստանի առաջապանքներուն անտարբեր հանդիսատես մնացած կամ անոնցմով շատ քիչ զբաղած ըլլալու մեղադրանքով: Վաստի որ ամենքը սրտաբնորոտ կեցցէներէ, Հիւնքար-Խոկիկէսի պոռոտ ճառերէ, ու ամէնաւերջ հրօցայտ երգերէ սպասած են և անոնց մէջ

կարծած են գտնել, կ'ըսեն, հայրենիքի վերականգնումին գրաւականն ու երաշխաւորութիւնը, գատարի խօսքը՝ զոր- ծօն՝ զօրութեան, հաճոյալիբ զրօսանքը՝ հայրենասէր անձ- նութիւթեան հետ շփութելով:

Հիմնաւոր ամբաստանութիւն թէ արտաքին երեւոյթ- ներէ պատրանք: Որպէս զի տարակոյսը փարատել հնա- բուսը ըլլայ պէտք է ուրուողմել կէս դարու ժամանակա- միջոցին Պալիս միմեանց յաջորդող սերունդներու գաղա- փարային բնաշըջումին եւ անոր ծնունդ՝ Հայաստանի նը- լիրուած աշխատութեանց պատմութիւնը: Խորհելու ըն- գունակ այն լրջամիտ երիտասարդները որոնք 1890 էն ի վեր հետզհետէ երեւան կուգան մեր հանրային կեանք- քնն մէջ, տենպահար անձնուէրներ կամ սրտատարօի հան- զիտատեաներ յեղափոխական յուզումին, շատ դժուարու- թեանց կը բաղին գիտակցօրէն գատելու համար անց- եալ մը սրմէ իրենք զեւ շատ հետու շեն: Տակաւին հա- տարի մը մէջ չէ ամփոփուած այդ անցեալին պատմու- թիւնը. հինքու յիշատակին գիմուս, տեարակներու եւ թերթերու պրպտուս, անհրամեշտ պայմաններ են անոր ուսումնասիրութեանը. ու ո՛չ հինքը միշտ աղոթթեր կը գտնուին, ո՛չ ալ թերթ ու տետրակ միշտ սոճեան: Այս բանի մը էջերը կը ներկայացնեն իրր յուշարար մը կամ՝ յատակաղիծ մը լուրջ աշխատասիրութեանց ձեռնարկել փոփաքօղներուն:

II

Վճռելու համար այն օգտակար ծառայութիւնները զոր կ. Պալիսը հայ գաղութը պարտաւոր էր եւ կրնար ալ մա- տուցանել Մայր-Հայրենիքին, պէտք է ևն առաջ Հայաս- տանի խակական վիճակին վրայ սրոշ գաղափար մը կազմել:

Վերջացող ԱԳրդ դարուն առաջին տարիները իբր սկզբնակէտ կը գնեմ այս կարճատուս ուսումնասիրութեան:

Ազգային կեանքի հիւթէն սպառուած ու իրենց ցաւա- զին օրերը մինչեւ գերեզման բաշկտակելու համար սղորմու- թեան կարօտ Հայրու անկեղանոց մը չէր — եւ հիմակ ալ չէ — Հայաստանը: Հոն կ'ապրէր, ու կ'ապրի, հայ ժողովուրդ մը բարոյական եւ նիթական ուժերով ջրապինդ, եւ սր ինքն իր մէջը կը խտացնէ բաղաբաղական ազգայնու- թիւն մը սանդղելու էակա: պայմանները: Հայաստան թէեւ դանազան ցեղեր կը բնակին բոյց միայն Հայու- թիւնն է որ կը ներկայացնէ կաղմակերպուած մարմին մը: Այդ կաղմակերպութեան բնորոշ յատկանիշներն են՝ թի- ւր, անտեսական գերբխանութիւնը, բարոյական զօրու- թիւնը, եւ ընդարձակ սահմանի մէջ ինքնաւարութիւն: Հայ ցեղը մինչեւ այսօր այդ նիթական ու բարոյական գերադանցութիւնը կը վայելէ իրեն բնակակից այլազգիներ- րուն վրայ:

Սխալ ենթադրութիւն է թէ հայ ազգը ցիրուցան է. մաս մը Հայեր իրենց երկրէն զուրս ելած են, ինչպէս կը

պատահի ամէն աշխարհներու մէջ, բայց Հայութեան ստուար զանգուածը հաստատ կը մնայ իր հողին վրայ: Օտար գաղթականներ եկեր տեղաւորուեր են իր քով: այդ բնակակցութիւնը բնաւ հայ ցեղին իր երկրէն տարագիր, ցիրուցան, թափառական ըլլալուն ապացոյցը չէ: Մաս մը Հայեր ալ իրենց կրօնքին հետ փոխելով իրենց լեզուն եւ մտնալով իրենց պատմութիւնը հայ շեն համարուիր կա- ուսվարական վիճակացոյցներու մէջ, ըստ արեւելեան սո- վորութեան, բայց այդ իսլամացած Հայերը ցեղով, արիւ- նով, տոհմային յատկանիշերով հայ են, ու քաղաքական լաւագոյն պայմաններու մէջ իրենց ազգայնութիւնը պիտի ձանչնան: Հայը եթէ իսլամական գնին պատկանող ցե- ղերուն համագումարին հետ բաղգատմամբ փոքրամաս- նութիւն համարուի, բայց ամէն մէկ ցեղին վրայ թիւին առաւելութիւնը իրն է: Իսկ ամէն պարագայի մէջ միւս ժողովուրդներէն ոչ մէկը առանձինն ազգութիւն մը կազ- մած ըլլալու յատկանիշերը ցոյց կուտայ:

Խառն բնակող այլաուեա ժողովուրդներու մէջ ցեղի մը անտեսական ու բարոյական զօրութիւնն է որ միւսներուն վրայ իրեն կ'ազդէ գերիշխանութեան առաւելութիւնը: Հայաստանի օտարները ու ոչ-հայ բնիկները ընդհանրա- պէս երկրադործ են եւ խաշնաբաժ: Հայը ոչ միայն երկ- րագործ է այլեւ բացարձակապէս իր ձեռքն սննի երկրին վաճառականութիւնը, ու ինքն է արհեստաւորը: Այսպէս ահա երկրի մը կեանքն ու բարբաւածուքը ապահովել կենտական պայմաններէն մինչ մէկուն միայն մասնակից են ոչ-հայ ցեղերը: Հայը իր երկրագործի, վաճառականի, արհեստաւորի, դրամատրի միացեալ ուժերովը Հայաս- տանի անտեսական կեանքին տէրն ու իշխանն է:

Թիւին առաւելութեան ու անտեսական գերիշխանու- թեան Հայը կը մի սցնէ բարոյական կեանք մը որ ուժ- գնապէս կը հաստատէ Հայաստանի վրայ անոր արբապե- տական զօրութիւնը: Թիւրքը կը շարունակէ մեր երկիրը արշաւող բանակի մը պէս վրանները գարկած մնայ: Հա- յաստանի իսլամները քաղաքակրթութեան հետք մը ցոյց չեն ի տար: Կոշտ ու կոպիտ գորանոցներ, ազտուս ու խտրաւոր պաշտօնատուններ, անիմաստ, աշեղ բանի մը մղկիթ, ահա ինչ որ գուշակել կուտայ վայրենիներու ներ- կայութիւնը մեր աշխարհը: Ամբողջ Հայաստան հայկա- կան տաճար մըն է, որ հայ ժողովուրդը անյիշատակ մա- մանակներէ ի վեր կ'ապրի հողեկան եւ մտաւորական հոյ, բանաւորեղծութեամբ զեղուն, ներշնչեալ կեանքով: Հայուն կրօնքը, հակառակ արտաքին երեւոյթին, եկամուտ չէ. հողին հետ ծնած, հողին հետ զանգուած կրօնքն է. վար- գավառը կը շարունակէ, ինչպէս Անահիտի օրերուն, ջրհե- ղեղի տարեպարձը: Ազգային նկարագիրը կրօնքէն ամ- րապնդուած է: Հայը իր կրօնքին թոխովը Նիւթին վեր կը սաւառնի, իտէականին մէջ կ'ընկղմի, անտեսանելի Գաղափարին համար կուտող ունահաստակուող ժողովուրդը կ'ըլլայ, ուստի եւ իբր ազգութիւն կ'ապրի դարբու հոլո- վումին մէջ:

Կրօնքը նաեւ Հայուն կուտայ անոր մտաւորական

կեանքին յարատեւութեան, հզօրացումին եւ յառաջի-
մութեան միջոցները: Հայը կ'իմաստասիրէ, կը քննէ, կը
խորհի, վասն զի կրօնքը զինքը կը մղէ մաքսով ապրելու:
Կրօնքը Հայուն միտքը փրկած է երբ մամուլը զեռ գոյու-
թիւն չունէր:

Գրականութիւն մը, հարուստ եւ բազմապարեան, որ
միշտ կը ճսխանայ ու կը զարդանայ, որուն կը ծառայէ
բազմահարուստ գեղեցիկ լեզու մը, սքանչելապէս բազա-
բակիրձ ժողովուրդը ըրած է Հայը Ասիոյ մէջ:

Ազգային կազմակերպութիւնը կը նստի զգործուի ինք-
նավարութեամբ: Հայը բացարձակ տէրն է իր ընտանե-
կան, կրթական, կրօնական բոլոր օրէնքներուն, և միան-
գամայն կը պահպանէ կարեւոր բաժին մը վարչական զը-
րութեան մէջ աւանդութիւններու շնորհիւ:

Հայաստանի Հայը 19րդ դարուն սկիզբը արդէն շա-
տանց աիրացած էր որոշ քաղաքականութեան մը որուն
միջոցաւ իսլամական բռնապետութեան տակ իր ինքնու-
թիւնը կը պահպանէր:

Այսպէս ահա անտեսական, հպեկան, մտաւորական,
վարչական, քաղաքագիտական յստակ ու որոշ կեանք
ունեցող Հայաստանէ մըն էր որ Պոլիս գաղթականու-
թիւն մը կուզար: Այդ գաղթականութիւնը Պոլսէն ո՛ր եւ է
նշանաւոր ծառայութիւն չէր կրնար մատուցանել Մայր-
Հայրենիքին, Պոլիսը Հայաստանի վրայ չունենալով ո՛ր եւ է
առաւելութիւն: Ընդհակառակը գաղթական Հայութիւնը
իր երկրէն հեռը բերած աւանդութիւններովն էր որ Պոլիս
իրը մարդ բիշ շատ կրնար ապրիլ: Օսմանցիներու մայրա-
քաղաքը թէև Եւրոպայի գլուղը, բայց ասիական էն յետին
գեղի մը պէս տղիտութեան մէջ թաղուած էր, ու կառա-
վարական եւ եկեղեցիական միացեալ բռնաւորութեան
տակ կը ճգմուէր: Սակայն Պոլիս գաղթող Հայոց սիրտն
ու միտքը միշտ մայր երկրին հետ էր, կը ջանային զրամի
միջօցաւ նպաստել Հայաստանի հաստատութիւններուն:
Վանքերը շէն, եկեղեցիները պայծառ պահէր — այսինքն
ինչ որ Հայաստանի բազմապարեան կեանքն էր՝ անոր շա-
րունակութիւնը ու բարգաւաճումը ապահովել, ահա է.
Պոլսոյ հայ գաղթականութեան Մայր-Հայրենիքին օգտա-
կար կարենալ ըլլալու միակ կարողութիւնը:



Խրիմի պատերազմը երբ վերջացաւ 1856ին, է. Պոլ-
սոյ Հայոց համար հին թուական մը արդէն փակուած եւ
նորը սկսած էր ու կը շարունակուէր:

Օսմանցիներու մայրաքաղաքը այլ եւս Եւրոպայէն
կղզիացեալ երկիր մը չէր: Շոգենաններու միջոցաւ հա-
ղորդակցութեան գիրութիւնը հիմնական փոփոխութիւն-
ներ կը մտցնէր է. Պոլսոյ կեանքին մէջ: Հայ երիտա-
սարդներ որոնց մէջ շատ կը գտնուէին ունեւոր գասակար-
գին պատկանողներէն, Եւրոպա երթալով ուսում կը ստա-
նային եւ նոր գաղափարներով լեցուած կը վերադառնային
Պոլիս: Միեւնոյն ժամանակ Ռափայէլեան եւ Մուրատեան:

վարժարաններովը կը ներգործէին է. Պոլսոյ հայութեան
վրայ: Պոլսոյ ամէն թաղերը հիմնուած վարժարանները
նոր կրթութիւն մը կուտային նոր սերունդին: Ֆրանսերէն
լեզուն կ'ընդհանրանար Հայոց մէջ եւ երիտասարդութիւնը
անսով կ'ընտելանար ֆրանսական մտքին: Միեւնոյն ատեն
Պոլսոյ թէ՛ անտեսական եւ թէ՛ քաղաքական կեանքը մեծ
փոփոխութեանց կ'ենթարկուէր: Շոգենանները վաճառա-
կանութիւնը զարգացուցած էին. Խրիմի պատերազմէն
բազմաթիւ Հայեր կը հարստանային, ու քաղքէնի նոր դա-
սակարգ մը կը ստեղծուէր: Թիւրքիա Եւրոպայի քաղա-
քակիրթ պետութեանց շարքը կ'անցնէր, եւ Ռաբենորո-
գումի խնդիրը պաշտօնապէս միջազգային դաշնադրի մը
մէջ մտնելով՝ բրիտանաց ժողովուրդները, որոնց մէջ եւ
Հայը, բարեբաստիկ ապագայի մը կը պատրաստուէին:
Պատրիարքները զեսպանատներուն հետ յարաբերու-
թեան կը մտնէին, եւ բագրի գրելու թոյլտուութեամբ
քաղաքական բողոքարկութեան իրաւունքը կը հաստատ-
ուէր: Ա՛յ հիմա է. Պոլսոյ հայ գաղթականութիւնը Հա-
յաստանի Հայոց վրայ բազմաթիւ առաւելութիւններ կը
վայելէր: Մեր երկիրը միշտ հաղորդակցութեան ճանա-
պարհներէ գուրկ կը մնար, եւ հոն տպարանի հաստատու-
թիւնը կառավարական անյաղթելի դուռութեանց կը
հանդիպէր, ուստի եւ Հայաստան Պոլսէն կը սպասէր իր
մտքին ուղղութիւնը: Պոլսոյ Հայերը Հայաստանի քաղա-
քական եւ մտաւորական առաջնորդները կը գտնային
պարագաներու բերմամբ: Պոլիս պարբերական մամուլ մը
ստեղծուած էր եւ բազմաթիւ զրգիր կը հրատարակուէին.
Հայաստան ատանք ամենքը կը լսուէր:

Մինչեւ 19րդ դարուն առաջին կէսը Պոլսոյ Հայոց
գաղափարները Հայաստանէն բերուած էին. հիմա Պոլիսն
էր որ Հայաստանի գաղափար պիտի խրկէր: Ինչպէս որ
Հայաստանի ու Եւրոպայի վաճառականութեան միջնորդը
Պոլսոյ Հայերն էին, նոյնպէս ալ Եւրոպայէն Հայաստան
գաղափարներու ներածութեան միջնորդը Պոլիսը պիտի
ըլլար:

Սակայն Պոլսոյ Հայերը հիմա զգալապէս կը տարբե-
րէին Հայաստանի Հայերէն, օրէ օր իրարու օտարոտի
դաճալու անխնայութիւն վտանգով: Պոլսոյ հայութիւնը
Հայաստանի հայութեան մէկ որոշ հատուածն էր. գաղ-
թականները կուզային եւ կը բարգուէին Ֆրանսի օրերէն
բերուած գաղթականութեան վրայ: Բայց այդ բոլոր գաղ-
թականները իրենց հետ կը բերէին երկրին գաղափարնե-
րը, զգացումները, աւանդութիւնները, լեզուն. Պոլիս նոր
բան մը չէին գտներ, ո՛չ զարգացում, ո՛չ գաղափար:
Բայց օտար երկիր ամէն գաղթականութիւն տեղական
տարրին մէջ ձուլուելու օրէնքին պէտք է հպատակի: Պո-
լիս տեղական տարրը յոյն էր, որ երկրին տէրը շըլ-
լալով եւ կղզիացեալ ապրելով չէր կրնար իր մէջը հա-
լեցնել Հայերը: Չուլումը թիւրքէն հետ կրնար ըլլալ, բայց
կրօնական պատնէշը անանցանելի էր: Ո՛չ մէկ ո՛չ միւս
կողմէն Հայութեան կորուստի վտանգ կար: Բայց Հայե-
րը իրարու մէջ պիտի ձուլուէին, ու կը ձուլուէին. նոր

տիպար Հայ մը կը ստեղծուի:

Նոր տիպար հայուն առաջին յատկանիշը իր լեզուին մէջն է: Հայաստանէն եկած գաւառաբարբառները, որոնք որքան որ ալ իրարմէ քիչ շատ տարբերին բայց իրենց ընդհանուր լեզուական ոգին մէկ է, Պոլիս հալոցի մը մէջ կը ձուլուին եւ նոր կաղապարներու վրայ թափուելով հետ-ըզհետէ նոր լեզու մը ստեղծելու կը ծառայեն: Այդ լեզուէն կը վտարուի Մայր-Հայրենիքը դարերու մթերած հարբստութիւններէն մեծ մաս մը: Պոլիս Հայը Հայաստանի կեանքէն շատ տարբեր կեանքով կ'ապրի. խել մը բառերու, բացատրութիւններու պէտք չզգալով անոնք ալ կը մտնայ: Պոլսոյ հայերէնը իր հոգէն, լոյսէն, ջուրէն զրկուած անարմատ ծառ մըն է որ արուեստական հիւթերով կ'ապրի. իր պտուղները որքան ալ գեղատեսիլ ըլլան բայց երբեք հայկական համը հոտը պիտի չունենան: Գրքերու հայերէնը, թուրքերէնի քերականութիւնը, ֆրանսերէնի ազդեցութիւնը կը ստեղծեն ոչ-հայկական հայերէն մը որ օր մը, շատ ուշ թէն, պիտի փնտոէ կենդանութիւնը հայրենի լեզուին հոգիէն, բայց առ այժմ կը սկսի Հայաստանի համար պարտաւորիչ ըլլալ: Պոլսոյ հայուն հնչումն ալ նորագոյն է. հայկական խրճնալուր բայց խորիտ եւ ուժգին շեշտը վստիստեան հայուն բերնին մէջ չի սլմիր:

Լեզուին հետ կ'այլափոխուի, կը տկարանար, կը հիւժուէր եւ կրօնական զբոսումը: Գաղթական հայը ջերմեանդ հաւատացեալ մըն էր, երկիւղած աւանդապահ հայրենի յիշատակներուն, որոնք այլ եւս իր գաւիին սըրտին շատ տկար կը խօսին, եւ անհասկնալի կը դառնան իր թոռներ: Հայ կրօնքը հայրենի հոգին վրայ է միայն սրտերը խանդավառող, հոգիները հրահրող, մտքերու տիրող մեծ ու սիրուած ահեզ զօրութիւնը: Հոս վանք մը, հոն ուխտատեղի մը, անդին ժամ մը, ամէն սար ու ձոր, հազարաւոր տարիներու յիշատակներ կը յափշտակին, կը գրանեն, կը գերեմարեն հայ մանուկը իր օրօրոցին մէջէն իսկ: Իրենք կուտան անոր հոգեկան կաթը, իրենք կը մեծցնեն անիկա, կը կրթեն, իրենցը կ'ընեն անիկա: Ան իրենցն է ա՛լ, իրենք անորն են: Հո՛ն հայը միշտ հաւատարմարժ հուրով բորբոքուած է. այդ հուրը հայրենիքի հրաբխային հոգէն միայն կը մայթթէ, ինչպէս Լոյսը միայն Երուսաղէմ կը բղիթ Զարութեան տաճարը ու հոն կը փայլի հայ հաւատացեալին աչքերուն: Գաղթականութեան նոր սերունդները լեզուին նման հայրենիքի կրօնքն ալ սկսան զրքերէ սորվիլ ու արհեստական միջոցներով պահել եւ կենդանացնել. բոցանիթ հաւատքը կը մարէր: Պոլսոյ հայութեան կրօնքը պաշտօնական ձեւերով կը նրմանը Հայաստանի Հայութեան կրօնքին. հոգին բացակայ էր:

Կը տկարանային, կը ջնջուէին նաեւ քաղաքագիտական աւանդութիւններն ալ: Հայաստանի Հայը զիտէր թէ ի՞նչ է Տաճիկը, եւ գաղթականութեան առաջին սերունդները իրենց հետ կը բերէին անոր հետ վարուելու դարաւոր գաղանիքը. նոր սերունդը կը տեսնէր ալաֆրանկա Տաճիկը, որուն արտաքին երեւոյթէն կը խաբուէր. չէր

կասկածեր պատեանին տակը ծածկուած վայրագութեան անչափութիւնը: Եթէ չէր ինքնուրու ջնջումէն յետոյ քրիստոնեաները Պոլիս բաւական հանգիստ կ'ապրէին, մանաւանդ երբ Եւրոպայի աչքը սկսաւ հսկել իրենց վրայ: Դժուար էր նոր սերունդին յստակ, որոշ գաղափար մը կազմել Հայաստանի իրական կացութեան վրայ:

Միայն թէ հետզհետէ եկող նոր գաղթականները հայրենիքէն լեզուի, յիշատակի, աւանդութեան նշխարները կը բերէին ու անով կ'ապրեցնէին Պոլսոյ կիսամեռ ոգին:

Այսպէս ահա 19րդ դարուն սկիզբները Պոլսոյ գաղթականութիւնը երբ տակաւին Հայաստանի ոգուիլն ու մտքովը կ'ապրէր, պէտք չունէր, եւ ինքն իսկ ընդունակ չէր ո՛ր եւ է բացառիկ ծառայութիւն մատուցանել մայր-հայրենիքին: Իսկ 19րդ դարու կէսին Եւրոպայի ցրտացումէն օգտուող Հայը մինչեւ աստիճան մը օտարոտի էր իր հայրենիքէն եւ անոր պէտքերուն գիտակցութիւնը չունէր:

* * *

Կ. Պոլսոյ նոր սերունդը որքան որ ալ Հայաստանի ժամանակակից կեանքէն անջատուած՝ բայց աշխարհաքաղաքացի չէր. ընդհակառակը ջերմ ազգասէր: Իր ձրգտութեան մէջ թէն տակաւին տարտամ եւ անորոշ, բայց զէպի ազատ հայրենիքի մը գաղափարը կ'արժանանէր: Իր գաստիարակութիւնը Հայաստանի հոգովը չէր, ու չէր ալ կրնար ըլլալ, բայց կ'ընծայէր ուրիշ առաւելութիւններ որոնցմէ օր մը Մայր-Հայրենիքը պիտի կրնար օգտուիլ:

Հայոց պատմութեան ուսումին ընդհանրացումը Կ. Պոլսոյ Հայոց գաղափարները եւ զգացումները յեղափոխելու կոչուած էր: Ազգային պատմութեան գաստիարակութիւնը կրթական ծրագրերու հաւատարմ գաւանանքն էր: Նորածիլ պատմականութեան ոգին հայ զիւցագներգութեան կենդանու հիւթովը կասկարմիր վարդի պէս կը փթթէր: Ազգային հանդէսները Պոլսոյ հայութիւնը կը կը հոգեկոորդէին վարդանանց, Ղեւնդեանց, Թարգմանչաց: Պոլսոյ հայաշատ թաղերը հաստատուած թատրոնները հայրենասիրական ոգին ստեղծելու եւ վառ պահելու կը նպաստէին: Պատմութիւնը կը կենդանանար, զիւցագները յարութիւն կ'առնէին, ու կը խանդավառէին նոր հայութիւնը: Հին փառքի յիշատակը կը խելայեղէր ամենքը, եւ ազգային փառասիրութեան ըզձանցներով կ'ողողէր սըրտերը: Անկախ, ազատ Հայաստանի մը երագանքը կը զինովցնէր ամենքը: Ողբերգութեան մը գոսած ընդունելութիւնը յստակ գաղափար մը կուտայ մտքերու ուղղութեան մասին: Արշակ Բ. չորս հեղինակ ներշնչեց եւ միանգամայն ստեղծեց առաջին, ու միակ, հայ օրերան: Սյդ տոսմին գոսած ընդունելութիւնը նշանակ մըն է: Արշակ Բ. ազգային ո՛ր եւ է վեհ գաղափար չի ներկայացնէր, ինչպէս վարդանը, ո՛չ ալ բարոյականի տիպար մըն է, եւ ոչ ալ զիւցագն մը, ու բոլոր գրուածներն ալ արուեստի սեռա-

կետով մեծ արժանիք չունին: Բայց հայ ժողովուրդը Արշակ Բ-ը խորհրդանշան մը համարեց, հայրենասեր, խրոխտ, զսոսոզ հայ թագաւորը որ օտարին զերին կ'ըլլայ: Շապուհը կը մարմնացնէր բոլոր բռնակալները որոնք հայութիւնը կը ճգմեն: Արշակի եւ Շապուհի միջեւ ազգայնութեան եւ օտարութեան կոխն է որ կը մղուի առանց բարոյակաւորի, կրօնքի նկատումներու:

Պոլսոյ վարժարաններէն, Մխիթարեանց դպրոցներէն ելած աշակերտներուն քով կը գտնուէր եւ սակաւթիւ խումբ մըն ալ որ իմաստասիրական եւ գիտական լուրջ դաստիարակութիւն ստացած էր. այդ խումբը իր մէջ կը միացնէր համամարդկային մեծ, լայն գաղափարները ու հայ հայրենասիրութիւնը:

Խրթմի պատերազմէն եաքը երեւան եկող այդ պոլսական երիտասարդութիւնը պէտք ունէր իր հանրային կեանքի գործունէութեան կէտ նպատակի կեդրոնի մը որուն շուրջը բոլորուելով իր մտածութիւնները իրականացնէր, իր զոգացումներուն յագուրդ տար: Նոր սերունդի երիտասարդութեան ստացած դաստիարակութիւնը արդէն ամէնուն մտքին մէջ այդ կեդրոնը պատրաստած էր. Հայրենիքը, Հայաստան:

Պոլսոյ հայը սակայն Հայաստանի վրայ իտէական գաղափար մը ունէր. հին Հայաստանը միայն կը ճանչնար. ան կը սիրէր, անոր վրայ կ'երազէր, բայց նաեւ կը զգար թէ անիկա ա՛յլ չկար: Եւ ահա օր մը օրուան Հայաստանը տեսիլքի մը պէս իր աչքին երեւցաւ, երիտասարդ վարդապետի մը գիմարած շուրջը: Վստիկան, Վստիկան, Վստիկան, սրտապրաւ Խրթմեան Մկրտիչ վարդապետն էր, զուտ, անարատ Հայաստանցի Հայր: Անոր անձին մէջ կը խտանար հայրենիքի բանաստեղծութիւնը, հաւատքը, աւանդութիւնները, տառապանքները եւ սուրբութիւնները: Իր ձեռքը սննէր Հրաշխակ Արարատեանը: Ինք երեւցաւ ու Վստիկանի հայ տաճարներուն մէջ Սիոնի տեղ՝ Վարդապետի, Խորայելի տեղ՝ Հայաստան կը բարոզուէր: Իրենց Մայր-Հայրենիքը յիշեցուց Հայրիկ Հայաստանէն վտարանդի գաղթական Հայոց: Մտքերը արդէն նախապարտաւորուած էին, ու սրտերը ամենքն ալ զեպուն էին երազներու մէջ փայտալուծած պատկերի մը սիրովը:

Ժամանակը հասած էր որ Պոլսոյ Հայութիւնը հայրենիքի վերջուլուծումն ունենար. հիմակ այլ ետ կարող էր աւելնալ ծառայութիւններ մատուցանել: Վտժանուտ արուածն մէջ էր. Պոլսոյ հայ գաղթականութիւնը տիրացած էր այն պիսի առաւելութեանց որոնցմէ հայրենիքի Հայրը զուրկ կը մնային: Պոլսոյ երրորդական եւ օսմանեան քաղաքականութեան կեդրոն մըն էր, ու հոն Հայոց զիրքը զօրեղ: Հայրը զրամ ունէին, մամուլ, ազգեցութիւն: Զարդացած զլուսններ, ազնիւ սրտեր իրենց հանրային կեանքին կ'առաջնորդէին: Պէտք էր ձեռք կարկառել Հայաստանի, ու անոր տեղը պատրաստել Արեւելեան խնդրին մէջ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Փ Ո Ք Ը - Ա Ս Ի Ա

«Խախտուած Ռիփիոն» պատմական ոչ գրադատական եռամսեայ հանդէսը իր վերջին քիչիկ մէջ Փոքր-Ասիոյ անցեալ ու ներկայ կացութեան մասին հետազոտող ուսումնասիրութիւններէն մը նրատարակած է, հետեւելով եւրոպացի հրատարակչութեանց: Ոչնայն էնք մեր բերեցողութեան ներկայացնելու մաս աւ մաս այդ կարեւոր յօդուածը, ոչը այնքան բաւ կայ սորվելիք Փոքր-Ասիոյ պատմութեան եւ ներկայ կացութեան մասին:

Ա

Շատ քիչ կրկին կայ այնքան մեծ դեր մը խաղացած աշխարհի պատմութեանը մէջ, այնչափ օժտուածքական հարստութիւններով որոնք իրենց արժեքները կը սպասեն, կամ ճամբորդին համար այնքան յանկուցիչ, որ Փոքր-Ասիոյ չափ քիչ ճանչցուած ըլլայ: Այս մասին, անոր հետ ամենէն աւելի համեմատութեան կրնայ զբաղել Սպանիան: Նմանութիւնը երկուքին ալ հաւատարմութեան երեսի վրայ թողուած ըլլալէն շատ անգին կ'անցնի: Իրենց ֆիզիքական նկարագրով, եւ մանաւանդ իրենց պատմութեամբ, երկու թերակղզիներն ալ բազմապատկեան շատ մը կէտեր կը թելադրեն: Երկուքն ալ Հոսմի ձեռքն էին, երկուքն ուլ գարեբով Քրիստոսնութեան եւ Խալաւութեան մարտին թատերաւայրը եղան: Երկու կրօններուն էն մտնանուց եւ էն մարտական ձեւերը յաղթանակեցին թէ՛ Արեւելը եւ թէ՛ Արեւմուտք, երբ կաթոլիկութիւնը Արաբները կը բանաւայլն վանեց, ու Խալաւութիւնը Քրիստոսնութիւնը վտարեց կ: Պոլսէն: Կրանաւայի եւ կ: Պոլսոյ — սորվէն աւել կ: Պոլսի իր պատմութեամբ Փոքր-Ասիոյ կը վերաբերի — անկում վը, զրեթէ միեւնոյն տանն ինկան նաեւ բարձրագոյն բազաբակրթութեան մը վերջին պատմւորներ: Օսմանի տունը Արեւելի մէջ եւ Գոսպիլիոյ տունը Սպանիոյ մէջ աշխատեցան եւ ճգնեցան միեւնոյն սոխով, մին Սիլոնը գաղթականները եւ միւսը գոթական թագաւորութիւնները իրենց մէջ հաշնեցնելով, ճշմարիտ հաւատքին համար անվկանդ կռուելով, եւ իրենց անյեղի յաջողութեանց խորհրդներուն վրայ հիմնելով ընդարձակ անյարիր կայսրութիւններ, որոնց անխուսափելի ճակատագիրն էր ջարդուիչուր քայքայուիլ իրենց յաջորդներուն ձեռքին մէջ: Այդ կայսրութիւնները աշխարհակալուց եւ պահպանելու համար, թէ՛ Փոքր-Ասիա եւ թէ՛ Սպանիա անմարդացան ու աղքատացան: Բարեբաղդաբար Այսպիսի համար, այսօր վերջուլուց աղաւաղ է այդ կայսրութեան բեռն զոր շէր գիտել ինչպէս տանէ: Բայց զեռ հաղաբաւոր արի ու հնազանդ անասուլուցի գեղացիներ պիտի մեռնին Ալպանիոյ, Մակեդոնիոյ եւ Թրակիոյ մէջ մինչեւ որ ո եւ է Օսմանցի սուլթան ձեռք քսէ իր նախնիք-

ներուն երկրակալութիւններն, կամ թէ իր սուղորու
թիւնը դարձնէ իր խօսի տողովսրդը վերակազմելու եւ հա-
րըստացնելու, փոխանակ իր ամբողջ ճիշդ նուիրելով՝ զըս-
պուած ապստամբութեան յարստեւ վիճակի մը մէջ զըս-
նուող այլացեղ ազգաբնակիւթիւնները սանձահարելու:

Փոքր-Ասիոյ պատմութեան մէջ տեսնուած շահեկա-
նութեան պակասին պատճառներն մին սա է որ պատմա-
դիրները Փոքր-Ասիան նկատած են միշտ որպէս զանազան
կայսրութեանց մէկ նահանգը ըսի: Պարսկական եւ հռոմէա-
կան արապետութեանց ատեն, այդ տեսակէտը բաւական
ճիշդ է. բայց բարբառովին սխալ է անոր պատմութեան մտա-
կալ մասին համար: Ութերորդ դարէն սկսեալ, Փոքր-Ա-
սիան կեդրոնը եւ հողին եղած է կայսրութիւններու որոնց
հետաւոր սահմանները երկնցած են Եւրոպայի, Ասիոյ եւ
Ափրիկէի մէջ, թէպէտ Փոքր-Ասիոյ մայրաքաղաքը բուն
իր աշխարհադրական սահմաններէն զուրս գտնուած է,
— բայց Սելճուքեան սուլթաններուն կարճատեւ տիրապե-
տութեան միջոցին, որոնց մայրաքաղաքը Բոնիան էր:
Բիւզանդական կայսրերը, որչափ ատեն որ Փոքր-Ասիոյ
մեծագոյն մասին տէրն էին, Եւրոպայի մէջ ալ հզօր վե-
հապետներ էին: Երբ Փոքր-Ասիան կորսնցուց, Կ. Պօլիս
գրեթէ նոյն հետախ պղտիկ իշխանապետութեան մը մայ-
րաքաղաքին աստիճանը ինչպէս: Ահա երկու դար է որ թիւր-
քերը աստիճանարար ետ կը մղուին Եւրոպայէն, իւրա-
քանչիւր թիւ հողին համար յամառաբար կուռելով. ու
Անատոլիոյ գիւղացին է որ մաքառած է այդ նահանջին
համար Վիեննայէն Պելլիբատ ու Նիշ, Տոն դեաւն Դանուբ,
ու Դանուբէն՝ Պալքաններուն վրայէն՝ մինչեւ Էոփրոսի
պարիսպները: Անատոլիոյ վճարած տուրքերն են որ մի-
ջոցները հայթայթած են այդ երկար ու անյայտ մաքառու-
մին՝ ընդդէմ օտար թշնամիներու եւ ապստամբ հպա-
տակներու:

Եւ սակայն, պատմագիրները աւելի մօտանց կը հե-
տաքրքրուին Հռոմէական կայսրութեան արեւմտեան կէ-
սին ճակատագրովը, որովհետեւ անոր աւերակներէն որ
ծնած է մեր արդի քաղաքակրթութիւնը: Բայց Հռոմէա-
կան կայսրութիւնը, բառին բուն իմաստովը, Արեւմտեան
Եւրոպայի մէջ լմնցած էր հինգերորդ դարու վերջէն
շատ առաջ: Հռոմէական Սուրբ կայսրութիւնը, որչափ
ալ իր ազդեցութիւնը խորին ըլլայ Եւրոպայի պատմու-
թեան վրայ, քաղաքական յղացում մըն էր, եւ ո՛չ քա-
ղաքական իրողութիւն մը: Բո՛ւն Հռոմէական կայսրու-
թիւնը, իր կազմակերպեալ վարչութեամբ, իր զինուորա-
կան ճամբաներով, իր սահմանապահ ամրոցներու երկար
շղթայով, Արեւելքի մէջ միայն տեսց: Փոքր-Ասիոյ մէջ,
որ պաշտպանելի ցամաքային սահմանադուր մը, ստուար
բնակչութիւն մը եւ առատ հարստութիւն ունէր, այդ կայս-
րութիւնը զարեւրով իր դոյութիւնը պահպանեց, երբ այ-
լուր արդէն կործանած լմնցած էր: Բնակիչները եւ հա-
րըստութիւնը աստիճանաբար նուազեցան, քաղաքային
գործօն կեանքը թիչ թիչ անշարժացաւ որոշ զստակարգե-
րու առանցամուտութեանը մէջ, հողատիրները փճացան՝ ու

բովնեան հողը երթալով մեծ հողատէրներու ձեռքը ան-
ցաւ, սուրբներուն բեռը անտանելի եղաւ: Ժամանակ մը
ետքը, պատերազմի, երկրաշարժի կամ ժանտախտի ա-
ւերները ա՛լ կարելի չեղաւ վարձանել: Այսու հան-
դերձ, տասնըմէկերորդ դարուն էր միայն — այսինքն՝
գերման արշաւանքին ամբողջ Արեւմտեան Եւրոպան աւ-
ելի տանելէն իբր 700 տարի ետքը, եւ Սլաններուն, Բէշ-
նէկներուն եւ Պուլկարներուն Այրիականէն մինչեւ Սե-
ծով բոլոր երկիրները կոտորեցին 300 տարի վերջը —
որ Փոքր-Ասիոյ վերջնական կործանման ժամը հասաւ,
եւ թիւրք ցեղերը իրենց վրանները հաստատեցին հու-
մակական քաղաքներուն մէջ եւ սրբեցին սկրթեցին հռոմէա-
կան քաղաքակրթութեան յետին նշխարները: Փոքր-
Ասիա չորս դար Հռոմէական կայսրութիւնը եղաւ, բայց
իր ամբողջ պատմութիւնը ասակից առաջ ու վերջը նոր
նշանակութիւն մը կը ստանայ: Այդ ամբողջ վարերուն
տեսողութեանը, Բիւզանդական կայսրերը փոփոխ յաջա-
գութիւններով մաքառեցան՝ Փոքր-Ասիան պաշտպանելու
ընդդէմ Պարսիկներուն եւ Արաբներուն: Սահմանադժերը
անընդհատ առաջ ու ետ կը տեղափոխուէին՝ պատերազ-
մին փոփոխական բաղդին համաձայն: Գրեթէ անկարելի է
հաշուել թէ Ամիգի եւ Եգիսիոյ մեծ բերդերը քանի՛ ան-
գամ պաշարուեցան ու ազատուեցան: Երկրին սիրաւ
անգամ արշաւանքէ ապահով չէր միշտ: Խոսորովի եւ խա-
լիֆաներուն բանակները երբեմն երբեմն մինչեւ Վասիլի
ափերը կը յառաջանային: Դստերով, Սուրբան եւ Փոքր-
Ասիոյ հարաւային արեւելեան նահանգները կայսրու-
թեան ձեռքէն ելած էին: Արաբ հրոսախմբերու արշաւանք-
ներուն պատճառաւ, անուանական սահմանադիւնէն աս-
դին մղոններով ու մղոններով տեղ արձակ տեղուանք
բնակիչը միշտ վտանգաւոր էր, եւ ասիկա ժողովրդին
թշուառութիւնը կը ծանրացնէր: Տասներորդ դարուն,
բաղդը նորէն Բիւզանդիոնի կողմը վարձաւ: Յովհաննէս
Գուրգէն, Նիկիոսի փոփոխ, Յովհաննէս Չժչիկի եւ վասիլ
Բ. նորէն տիրացան կայսրութեան հին նահանգներուն
մինչեւ Լիբանան, եւ Հայաստանի լեռներէն անդին:

Բայց Փոքր-Ասիա շատ սպառած էր կայսրութեան
երկար մաքառումէն ընդդէմ Պուլկարներուն, արեւմտեան
կողմը, եւ Արաբներուն, արեւելեան կողմը. իր ազդեցու-
նները անբաւական էին ընդարձակածաւալ սահմանադի մը
պաշտպանութեան միջոցները հայթայթելու կամ նոր զը-
բաւուած երկիրները յանձանձելու: Եւ ճիշդ ինչպէս Հերակ-
լիոս Պարսիկները ետ մղելով ուրիշ բան ըրած չէր բայց եթէ
արար աշխարհակալներու ճամբան բանալ, նոյնպէս ալ իր
յաջորդները չորս դար ետքը Արաբական խալիֆայութիւնը
սկիւրացնելով ն իբր պատուար ծառայող իբերիոյ, Վրաս-
տանի եւ Հայաստանի անկախ պետութիւնները զրաւելով
ուրիշ բան չըրին բայց եթէ ճամբայ բանալ Սելճուքեան
թիւրքերուն մինչեւ իրենց կայսրութեան սիրտը: Այս
վերջին հարուածէն՝ կայսրութիւնը իրբեք զուտը չշտկեց:
Մանազկիւրտի պատերազմը, 1071ին, որուն մէջ Ալփաս-
լան յաղթեց եւ գերի բռնեց արի բայց անխոհեմ Ռոմա-

նոս կայսրը, մահացու հարուածը եղաւ Հոսմէական կայսրութեան համար: 1071էն մինչեւ խաչակիրներուն ձեռքով կայսրութեան վերջնական կործանումը 1204ին, պատահած բոլոր զկարգերը իր քայքայման միջազկաներն են լի: Չափազանց տուրք, վատթար վարչութիւն, հողատէրներու բացակայութիւն, արդէն մեծապէս նուազեցուցած էին փոքր-Ասիոյ երկրագրծ ժողովուրդը: Թիւրքերը հիմա հեղեղի մը պէս սողոզեցին ամբողջ երկիրը, բնաջինջ ընելով, իրենց առջեւէն քշելով կամ իրենց մէջ իրացնելով բնիկ ժողովուրդը: Մանազկերտի ճակատամարտէն քսան տարի չանցած, Գըլըճ Ալան իր մայրաքաղաքը հաստատեց Նիկիա (Իզնիք), զրեթէ կ. Պսլոյ զրան առջեւ: Խաչակիրները շատ ուշ հասան թիւրք աշխարհակալներուն հոսանքը ետ մղելու: Արիստուանի արշաւանքէն զար մը ետքը, փոքր-Ասիա թիւրք երկիր մը եղած էր: Շատ քիչ անդամ պատահած է որ այսքան կարճ ժամանակի մը մէջ ցեղ մը ուրիշ ցեղի մը սեղը բռնած ըլլայ այսքան լիովին: Փոքր-Ասիոյ թերակղզիին հիւսիսային արեւմտեան անկիւնը եւ հիւսիսային ծովեզերքին ինչ ինչ մասերը միայն կը մնային կայսրութեան: Երայրագոյն հարաւային արեւելեան կողմը, Հայաստանի նոր թագաւորութիւնը — զոր բուն Հայաստանէն զաղթողներ հիմնած էին — երկու զար պահպանեց իր անկախութիւնը: Ամէնէն հարուստ բերդաքաղաքներէն մէկ քանին իրենց զիրենց ասեւ մը պաշտպանեցին, մինչդեռ արձակ երկիրը թիւրք եղած էր: Ասոնցմէ ամէնէն նշանաւորն էր փիլատեղիի, որուն արի քաղաքացիները կանդուն մնացին մինչեւ 1390: Ողջ մնացած քրիստոնեայ ազգաբնակիւթիւնը հոս հոն ցրուած էր, հետզհետէ կորսնցնելով իր մայրենի լեզուն եւ մեծ մասամբ թիւրքերէն խօսելով, որ յետոյ նոյն իսկ եկեղեցիին մէջ սիսաւ գործածուի: Վերջին տարիներս է միայն որ յունարէնը նորէն մուտ գտաւ փոքր-Ասիոյ ներսերը, երկաթուղիներուն ճամբուն վրայ: Բնիկ ժողովուրդներէն շատը կրցան իրենց ցեղային ինքնութիւնը պահել՝ արտաքրուստ իսլամութիւնը ընդունելով: Այսօր փոքր-Ասիոյ մէջ զանազան ազանդներ կան որոնք պաշտօնապէս մահմետական արձանագրուած են, ինչպէս Գըզըլպաշները՝ հիւսիսային արեւելեան կողմը, Լիւկիոյ թահաւանները եւ Պէքթաշները, կամ Կիլիկիոյ Անտարիէները, որոնց զաղտնի ձեւերը կը կարծուի թէ զարերուն մէջէն պահպանած են իրենց քրիստոնէական նախկին հաւատքին մէկ ազօտ անկողութիւնը: Գոնակաբանական հետազօտութիւններ ալ ցոյց կուտան թէ փոքր-Ասիոյ բնիկ բնակիչներէն մեծ մաս մը անկորուստ տեւեց թիւրք աշխարհակալութիւնէն ետքը, եւ զլուսներու ոչ-թիւրք տիպարներ մասնաւորապէս յաճախեցին են այս զանազան ազանդներուն մէջ: Այսօրուան Անատոլիոյ թիւրքը մեծապէս կը տարբերի իր կեդրոնական Ասիոյ ցեղակիցներէն:

1073ին, Ալփաւլանի մահուանէն յետոյ, իր որդին Մէլէք Շահ փոքր-Ասիոյ երկրակալութիւնը առաջ տանելու գործը յանձնեց իր Սիւլէյման ազնականին, որ Սել-

ճուքի թոննորդներէն մին էր: Սիւլէյման եւ իր որդին Գըլըճ Ալան կատարելապէս անկախ վեհապետներ էին, եւ հիմնեցին «Բում»ի Սելճուքեան սուլթանութիւնը, որ երկու զար փոքր-Ասիոյ քաղաքականութեան մէջ առաջնակարգ դերը խաղաց: Դար մը չափ Բիւզանդացիներուն եւ խաչակիրներուն դէմ՝ կռուելէ յետոյ, Սելճուքն երբ ըստ երեւոյթին՝ մշտապէս հաստատեցին հզօր եւ քաղաքակիրթ կայսրութիւն մը: Ալաէտտին Քուլաստ Ա ի (1219-36) ներքեւ, կայսրութիւնը իր շքեղութեան գազաթնակէտը հասաւ: Իր ձեռքին մէջէն էին ամբողջ փոքր-Ասիան՝ բացի Նիկիոյ եւ Տրապիզոնի յունական պալիկ կայսրութիւններ, ինչպէս նաեւ Հայաստանը եւ Վերին Միջագետքը: Ալաէտտին իր բոլոր ջանքը նուիրեց երկրին բարեկեցութիւնը վերահաստատելու: Նորէն շինեց ու ամրացուց զլիւսուր քաղաքները, նորոգեց ճամբաները, եւ լայն խաներ հիմնեց ճամբորդներուն օգտին համար: Մեծ վարժարաններ ու մենաստաններ հաստատուեցան կայսրութեան ամէն կողմը, եւ մահմետական ամբողջ աշխարհէն ուսանողներու եւ աւելիչներու խումբեր իրենց քաշեցին: Քոնիա իսլամութեան մտաւորական կեանքին կեդրոնը եղաւ իր իշխանութեան օրով: Մոնղոլներուն յառաջխաղացումները ստիպեց թիւրքիստանի եւ Պարսկաստանի բանաստեղծները, արուեստագէտները եւ գիտնականները որ ապաւէն փնտռեն Ալաէտտինի արքունիքը: Քոնիայի վարժարանները պճնող նշանաւոր մարդերուն ամէնէն հռչակաւորն էր Ճէլալէտտին միստիքական բանաստեղծը, աւելի շատ ճանչցուած «Բումի» անունով, որուն հայրը, Շէյխ Պէհաւտտին, Պուխարայէն փախած եկած էր: Ճէլալէտտին հիմնադիրն էր Մէլլիլի սերիչներուն, եւ իր թիւրպէն կամ դամբարանը տակաւին կը տեսնուի Քոնիա, Մէլլիլիներու զեղեցիկ թէքքէին մէջ: Քոնիայի, Նիկիայի, Գարսիանի, Կեսարիոյ, Սըլազի, Տիլիլիի, Ամասիայի, Էրզրումի աւերակները տակաւին կը վկայեն Սելճուքեան ճարտարապետութեան զեղեցիութեանը եւ ուժին: Բայց Բումի կայսրութեան շքեղութիւնը կարճատեւ եղաւ: Ալաէտտինի մահուանէն մէկ քանի տարի ետքը, Մոնղոլները փոքր-Ասիան արշաւեցին, եւ իր որդին Կայասուտին՝ Մեծ Խանին զերիշխանութիւնը ճանչցաւ: Սուլթան Ալաէտտինի յաջորդները, Մոնղոլներու ներկայացուցիչներուն հսկողութեանը տակ, սիրապետեցին մինչեւ 1307, որ ատեն Ալաէտտին Քուլաստ Բ սպաննուեցաւ Կազազ Խանի հրամանով՝ իր անկախութիւնը վերստին ձեռք բերել փորձած ըլլալուն համար: Բայց Մոնղոլները բնաւ չփորձեցին ուղղակի կառավարել փոքր-Ասիան, եւ իրենց իշխանութիւնը շուտով քայքայուեցաւ 14րդ դարուն մէջ: Սելճուք տիրապետութիւնը բաժնուեցաւ տասը անկախ թիւրք էմիրութիւններու, որոնց մեծ մասը առաջին էմիրներուն անունովը կը կոչուէր: Այս էմիրներէն շատին պատմութիւնը անկարելոր է, բայց իրենց անունը տուին Անատոլիոյ տեղական բաժանումներուն, որոնք մինչեւ հիմա մնացած են ժողովրդին բերանը եւ որոնց զեւ մասամբ կը համապատասխանեն

արդի Վիլալիթները: Բիւզանդական բաժանումները որոնք
բեմ կը կոչուէին, այսինքն զօրաբանակ, անշուշտ ջնջուած
էին բիւզանդական բանակներուն վտարուելէն անմիջապէս
եւջը. բայց անդական հին բաժանումները, որոնցմէ շա-
տը նախապատմական ժամանակներէ ի վեր կը տեսնին,
Թիւրքերուն գալուի՝ վերջնապէս ջնջուեցան: Բացի Օս-
մանցիներէն, Գարամանի տան Էմիրները միայն պատ-
մական կարեւորութիւն մը ունին:

1230ին ատենները, Էրթողրուլ իբր 400 ընտանի-
քով, շատ մը Թիւրք սլոպիկ ցեղապետներու պէս արկածի
եւ կողպուտի ի խնդիր ճամբայ ելլելով, Բուժ կայսրու-
թեան հողը մտաւ: Ի վարձատրութիւն Մոնկոլներու դէմ
ճակատամարտի մէջ իր ցոյց տուած արութեանը, Սուլթան
Ալաէտտին իբր աւատ անոր շնորհեց Սէյիւտ գիւղա-
քաղաքը, Էսկիշէհիի եւ Բիւզանդական սահմանապահին
միջեւ: Աւատը փոքր էր, եւ անպուկ կոուելով միայն կա-
րելի էր զայն պահպանել, բայց ատիկա Օսմանեան մեծ
կայսրութեան հունարը եղաւ: Էրթողրուլի որդին Օսման,
իր բոլոր ցեղովը, իսլամութիւնը ընդունեց: Սելճուքեան
կայսրութեան վերջնական քայքայմանը ատեն, Օսման
անկախ իշխան մը եղաւ, եւ պատեհութեան օգուտ քաղեց
զրաւելու Սանկարիոսի ամբողջ հովիտը, եւ Յոյները ի-
րենց հողէն զջելու վանելու գործին ձեռնարկելու: 1317
ին, իր որդին Օրխան, երկար պաշարումէ մը յետոյ, ըս-
տիպեց Պրուսան անձնատուր ըլլալու: Օրխան օսմանեան
կայսրութեան բուն հիմնադիրը եղաւ: Ան էր որ իր եղբո-
րը՝ Վէզիր Ալաէտտինի հետ կատարեց զինուորական եւ
քաղաքային կազմակերպութեան այն ամբողջ զրութիւնը,
որ ինքնին կը բացատրէ Օսմանցիներուն հրաշալի յաջո-
ղութիւնը: Այդ յաջողութեան մէկ մեծ գաղտնիքն
էր խնամքով մարզուած մարդիկ՝ ձաւնագետներ՝ գոր-
ծածել թէ՛ պատերազմի եւ թէ՛ վարչութեան համար:
Պատերազմի մէջ Թիւրքերուն յաղթել անկարելի էր. ա-
նոնցմէ աշխարհակալուիլը՝ յաճախ առաւելութիւն մըն էր:
Միւս գաղտնիքն էր աշխարհակալուած քրիստոնեաները
գործածել իբր գործիք մը նորանոր աշխարհակալութիւն-
ներու: Ամէն մարդ գիտէ թէ եկնիչները քրիստոնեայ
տղաքներէն կ'անուէին: Ատիկից զատ, ամէն քրիստոնեայ
որ իսլամութիւնը կ'ընդունէր եւ աշխարհակալներուն կող-
մը կ'անցնէր, վստահ էր թէ պատուաւոր պաշտօն մը պի-
տի գտնէր իր կարողութեանը համեմատ, կեանքի մէջ իր
առջի գիրքը ինչ որ ալ եղած ըլլար: Երեք պար օսմանեան
կայսրութիւնը պատերազմի մէջ եւ խաղաղութեան ատեն
իրեն պիտաւոր օժանդակ ունեցաւ քրիստոնեայ հաւատու-
բացներ, որոնք քրիստոնեայ Եւրոպայի ազնուապետական
անձուկ ընկերութեան մէջ իրենց փառասիրութեան կամ
կարողութեան յարմար ասպարէզ չէին կրնար գտնել:
Թիւրք իշխանութիւնը իր գագաթնակէտը եղած ատեն
զայն գիտողներուն ամէնէն բանիմաց մարդերէն մին,
Պուսպէք Հոլանտացին, գիտել կուտայ թէ այդ ահաւոր
Թիւրք հրամանատարները զորոնք ինք միշտ վայրագ Ա-
րաբներ, Թիւրքմէներ կամ Ասորիներ երեւակայած էր,

մտաւն ըննելով՝ գրեթէ միշտ կը տեսնուէր որ առաջ պըզ-
տիկ գերման խանութպաններ, մաճառ խոհարարներ, ի-
տալացի ձկնորսներ եւ դեռ ո'վ գիտէ ինչ եղած էին:
Օսմանցիներուն վարմունքն ալ էական տարր մըն էր իրենց
յաջողութեան մէջ: Միշտ առաջին կարգերուն մէջ էին
ընդգէմ «անհաւատներուն», եւ Անատոլի մէջ ամէն
մոլոտանդ եւ արկածախնդիր կը փութար անոնց զրօշակին
տակ զինուոր զրուելու:

Փոքր-Ասիան վերջնապէս Օսմանցիներուն ձեռք ին-
կաւ՝ երբ Բիւզանդացիները Ասիայէն վտարուեցան եւ
Պալքանեան Թերակղզիին մեծ մասը իրենց ձեռքը անցաւ:
Պայազետ Ա, 1392ին Գարամանիոյ Ալաէտտինին յաղ-
թելէ եւ զանի կախելէ յետոյ, ամբողջ Անատոլուն իր կայս-
րութեան միացուց: Տասը տարի յետոյ, Թիմուր Պայա-
զետի յաղթեց Էնկիլըի մեծ ճակատամարտին մէջ: Թի-
մուրի արշաւանքը մեծապէս զիւրացուցած էին Անատոլի
գահընկէց իշխանները, որոնք անոր արքունիքը փախած
ապաստանած էին: Թիմուր այդ իշխանները վերահաստա-
տեց՝ Պարսկաստան դառնալէ առաջ, իբր հարուած մը
օսմանեան զօրութեան: Բայց հարուածը առեւմեայ էր
լսի: Անիշխանութեան եւ խանակութեան շրջանէ մը յե-
տոյ, Օսմանցիները նորէն ձեռք բերին իրենց գերիշխա-
նութիւնը: Գարամանիա, որ կանգուն մնացած միակ
պետութիւնն էր, 1472ին Ֆաթիհ Մէհմէտի ձեռքով
Օսմանեան կայսրութեան միացուեցաւ: Ատիկից առաջ
արդէն, 1461ին, Մէհմէտ կործանած էր Տրապիզոնի
կէս-անկախութիւնը, եւ 1473ին սապալեց Ուզուն Հա-
սանը, Աջ Գոլյունուի պետը, եւ կայսրութիւնը ընդար-
ձակեց զրեթէ մինչեւ իր արդի արեւելեան սահմանազու-
խը: Հայաստանի եւ Բիւրստիստանի մնացեալ մասը եւ
Թիւրքիոյ միւս ասիական նահանգները՝ Սիւլիմ Աի եւ
Սիւլէյմանի ձեռքով միացուեցան: Պարսկական սահմա-
նապահին համար երկու կողմն ալ ամբողջ զար մը կուու-
ցան, առանց վերջնական առաւելութիւն մը շահելու, մին-
չեւ որ 1639ին Պարսկաստանի եւ Թիւրքիոյ միջեւ հաշ-
տութիւնը կնքուեցաւ Մուրատ Գի ձեռքով: Պարսկական
պատերազմները մեծապէս աւերեցին ու ապրատացուցին
արեւելեան Անատոլուն, ու միւս կողմէ մեծ արշիւք եղան
Թիւրքերուն յառաջխաղացութեանը Եւրոպայի մէջ:
Պարսկական պատերազմը զժուարացաւ շատ մը ապրս-
տամբութիւններով որոնք Փոքր-Ասիայ մէջ ծագեցան Օս-
մանեան տիրապետութեան դէմ, եւ որոնք մասամբ հետե-
ւանք էին աւատական ազնուականութեան ըմբոստութեան,
մասամբ ալ ժողովրդին մէջ Շիի ձգտումներու որոնք Պարս-
կաստանի կը համակրէին եւ սաստիկ հակառակ էին Օս-
մանցիներուն Սիւննի խիստ ուղղափառութեանը: Այս ա-
պրստամբութիւնները նորէն անգի ունեցան այս պարուն
սկիզբը, երբ բարեկարգիչ սուլթան Մահմուտ ջնջեց ա-
ւատական զրութիւնը եւ փճացուց Տէրէ Պէյիները, որոնք
ամէն կողմ մէյմէկ պզտիկ իշխաններ գործած էին 18րդ
դարուն՝ կեդրոնական վարչութեան ակարութեան միջոցին:
Մահմուտն էր որ կեդրոնացեալ վարչական զրութիւնը

մացուց որ անկից ի վեր կը տիրէ թիւրքի մէջ, եւ որուն անդարմանելի փառութիւնը երեւան եկաւ արդի Սուլթանին արապետութեան տակ:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԳԱՂՏՆԻ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻԻՆԸ

«Ռըվիշ տը Բասի»ի յոշնիս 15ի րիշին մեջ հայկական դատին ֆրասացի ծակօր ջատագովներէն Պ. Բիէս Բիշեաւ մանրամասնօրէն կը պատմէ 1897 նոյեմբերէն 1898 հոկտեմբեր Բարիզի օսմանեան դեսպան Միւնիք պէյի եւ Հայ յեղափոխական կազմակերպութեան մը կեդրոնական Գումիթիէն միջեւ տեղի ունեցած բանակցութիւնները: Յօդուածը գրեթէ ամբողջութեամբ կը ներկայացնէք մեր ընթերցողներուն:

Պ. Բիէս Բիշեաւ Սասունի ջարդերէն ի վեր պատահած դէպքերուն մէկ համառօտ տեսութիւնը ընկէ յետոյ, կ'անցնի յիշեալ բանակցութեանց պատմութեանը:

... Սոյն ու թշուառութիւնը կը շարունակեն փոքր-Ասիոյ մէջ սուրին և հուրին գործը, և ըստ երեւութիւն՝ սուլթանը ո եւ է վախ ունենալու չէր այսքան ահեղօրէն ճրգմուած ժողովուրդէ մը: Սակայն՝ Ն. Կ. Վ. Ապտիւլ-Համիտ, Աստուծոյ ստուերը երկրի վրայ, որ հիւանդաղին մտահոգութեամբ մը անձամբ կը զբաղի իր կայսրութեան մէջ անցած դարձած ամէն բանով, թերեւս բոլորովին վստահ չէ իր գործածած կառավարական միջոցներուն գերազանցութեանը. կը պատահի որ յանկարծական վրէժխնդրութիւններէ սարսափահար մնայ, եւ երկիւղի ո եւ է շարժառիթ մը ունենալուն պէս՝ կ'աշխատի օձիքը ատկից ազատել մերթ դիւանագիտութեամբ, մերթ բռնի ուժով: Աղէկ գիտէ թէ Եւրոպայի մէջ հայ յեղափոխականներ կան որոնք չեն ներքը, եւ նպատաւոր ժամուն կը սպասեն՝ նորէն քաղաքակիրթ աշխարհին ուղարկութիւնը հրաւիրելու համար իրենց ցեղին դժբաղդութեանցը վրայ. եւ եթէ երբեմն երբեմն զանոնք «սրիկաներ» ու «քամահրելի անիշխանականներ» անուանել կուտայ եւրոպական մամուլին մէջ՝ ուր բարեկամական յարաբերութիւններ կը պահպանէ մեծ ծակըցով, ուրիշ ատեններ ալ հոգ կը տանի անոնց հետ հաւասարէ առ հաւասար վարուելու:

Այսպէս 1897 հոկտեմբերին, երբ վիլհելմ Բ կայսեր Արեւելք ուղեւորութիւնը որոշուեցաւ, սուլթանը տեսաւ թէ հարկ պիտի ըլլայ որ հրապարակաւ ընդունի իր հիւրը, և որպէս զի գալիք հանդէսներուն ատեն շատ ուստիկ մտահոգութիւններ չունենայ՝ որոնք կայսերական անդորրամտութեան հետ հաշտ չեն երթար, հարկ պատեց բանակցութեան մանկ Բարիզի գումիթիէն հետ:

Բացարձակ վեհապետի մը եւ իր մէկ քանի հպատակներուն միջեւ տեղի ունեցած այդ բանակցութիւնները պիտի պատմեմ առանց մեկնութեան, բացի բացատրութիւններէ որոնք անհրաժեշտ են հասկնալու համար պաշտօնագրերը, ճիշդ որպէս եթէ խնդիրը զաշնագրի մը նախապատրաստութեանց վրայ ըլլար. և իրաւ ալ, սաղարեւ յիշուած թղթերը կարգալով, պիտի տեսնուի թէ զէմ առ զէմ եկած երկու կողմերը ուղարկութիւն կ'ընեն ձեւակերպութեանց եւ դիւանագիտական բանաձեւները կը գործածեն, անթերի վարուողութեամբ:

* *

1897 նոյեմբեր 20ին, սուլթան Ապտիւլ-Համիտ յատկապէս Բարիզ զրկեց Գէորգ Պիլպիւլեանը, նախկին ընդհանուր դատախազ Էտիքնէի եւ բարեկամ Բերայի կառավարիչ Էնիլը պէյի, փնտառու հասկնալու թէ յեղափոխական գումիթէն պիտի հաւանէ՞ր համաձայնութեան մը, եւ ի՞նչ պայմաններով: Գումիթէն մերժեց խօսակցութեան սկիւղ կէս-պաշտօնական առաջնալի մը հետ, բայց յայտարարեց թէ, հաշտարար ողի մը ապացոյցը ապու համար, պիտի բանակցէր սուլթանին մէկ պաշտօնական ներկայացուցչին հետ, քանի որ մերձեցման մը նախաձեռնութիւնը սուլթանին կողմէն կուգար: Ասոր վրայ, Բարիզի օսմանեան դեսպան Միւնիք պէյը նշանակուեցաւ, եւ գումիթէն ընդունեց:

Իբր նախապատրաստական տնօրինութիւններ որոնք հաւաստիքներ ըլլային թէ այնքան անգամ խոստացուած բարենորոգումները պիտի գործադրուէին եւ թէ վեհապետին բարեկամեցողութիւնը իրաւ էր, գումիթէն խնդրեց.

Ա. Ընդհանուր ներում.

Բ. Չարիքէն յետոյ երկրէն հեռացած գաղթականներուն ազատ զարձ.

Գ. Հայերուն զէմ ճնշողական ու արդելիչ անօրինութեանց բարձում.

Դ. Նիւթական նպաստ այն գաղթականներուն որոնք ի չզոյէ զրամի չէին կրնար իրենց տունը-տեղը դառնալ:

Իբր վեց ամիս բանակցութեանէ յետոյ, սուլթանին մէկ իրատէն՝ 1898 ապրիլ 15 թուականով՝ թուեցաւ զոհացում տալ գումիթէն խնդրանքներուն: Ահաւասիկ ամփոփումը այդ սկզբնական պաշտօնագրին, այնպէս ինչպէս հաղորդուեցաւ Միւնիք պէյի կողմէ.

Մոչքանէն յրատե (15 ապրիլ 1898)

«Տիեզերքի արարիչը յաւէտ պահէ Նորին վեհափառութիւն մեր օգոտտափառ տէրը օսմանեան գահուն վրայ: «Յանուն Նորին կայսերական վեհափառութեան Սուլթանին, կը յայտարարեմ թէ, կայսերական հպատակներուն միջեւ բարուք համաձայնութիւնը վերահաս.

տատել կարենալու եւ անոնց միջեւ բարեկամական յարաբերութիւնները վերահաստատելու փափաքով, ընդհանուր ներում շնորհուած է այն բոլոր Հայերուն սրտնք, սաղարնքներէ խաբուած, հաւատարմութեան շաղէն շեղած եւ խոսովութեանց մասնակցած են. նմանապէս ընդհանուր ներում շնորհուած է Եւրոպա գտնուած Հայ դուրմիթէին որ յեղափոխական շարժումներուն հեղինակը եղաւ:

« Հետզհետէ որ հայ ժողովուրդը ապացնեցանէ իր հաւատարմութիւնը եւ՝ հետեւաբար՝ եղբայրական կապերը վերահաստատուին անոր եւ միւսիւմաններուն միջեւ ի մեծ գոհունակութիւն Նորին Կայսերական Վեհափառութեան որուն վստահութիւնը օր օրի պիտի աւելնայ, անցեալը բողոքովին պիտի մոռցուի եւ կայսերական գթութեամբ ու ներումով պիտի ծածկուի. Հայերը մեծ բաժին պիտի ունենան այն բարեքններէն զորոնք զերիշխան ժողովուրդը կը վայելէ: Ներուածներէն անոնք որոնք կարող են, իրենց ընդունակութեանցը համաձայն վարչական պաշտօններու պիտի կոչուին. պէտք ունեցողներուն ալ դիւրութիւններ եւ նիւթական օգնութիւններ պիտի տրուին: »

Ստորագրուած Բարիզի օսումնեակն դեւպակն Միւնիխ պէյի կնիքով

Սուլթանը իր միւսիւման եւ հայ հպատակներուն միջեւ անհամաձայնութիւն կ'անուանէր նախորդ տարիները կատալարութեան անօրինութեամբ կատարուած ջարդերը: Կը հասկցնէր որ մասնաւոր շնորհներ կը վերապահէր զանալիք կամաւոր աքսորեալներուն. ասով կ'ամ կը յուսար որ մասնիշի զեր կատարէին անոնք, կ'ամ մանաւանդ կը խորհէր բանտարկել կամ ազգու միջոցներով լքուութեան գատապարտել երբոր Կ. Պոլիս դառնային:

Իրողութիւնը սա է որ իր խոստումներէն ոչ մին կատարեց, եւ գոմիթէն ստիպուեցաւ երեւան հանել բանակցութիւնները եւ իր խօսակցին վարժանքին իրեն ներշնչած անվստահութիւնը՝ վեց մեծ տէրութեանց արտաքին գործերու նախարարներուն սեղջուած յիշատակագրով մը որ 1898 մայիս 23 թուականը կը կրէ.

« Պարսն նախարար,

Հայ Յեղափոխական Կեդրոնական Գոմիթէն պատիւ ունի Ձեզ իմացնելու հետեւեալ եղելութիւնները որոնք թիւրքիոյ մէջ տիրող իրաց կացութեանը հետ վերաբերուիին ունին:

Սուլթանին կողմէ մասնաւոր պատուիրակ մը 1897 նոյեմբեր 20ին Բարիզ եկաւ. օսմանեան կառավարութեան կողմէ իրեն պաշտօն տրուած կը հայ յեղափոխականներուն դիտաւորութիւնները հասկնալ, եւ ջանալ զեաւտել թէ արամազիբ կին բանակցութեան մտնել պատուիրակի մը հետ որ յանուն սուլթանին պաշտօնապէս գործելու համար աւելի իրաւասու ըլլար, եւ այսպէս վերջ գնել այն ցաւալի կացութեան սրուն մէջ կը տապալակի թիւրքիան:

Յեղափոխութիւնը նպատակ մը չէ Հայերուն համար, հապա լուի միջոց մը հարկաւոր բարենորոգումները ձեռք բերելու: Կեդրոնական գոմիթէն սկզբունքով ո եւ է պատճառ չտեսաւ մերժելու այս կարգի բանակցութիւններ, մանաւանդ որ նոյն ինքն Սուլթանին կողմէ կ'առաջարկուէին:

Այդ մասնաւոր պատուիրակին եւ գոմիթէին միջեւ նախապատրաստական բանակցութիւններէ յետոյ, Բ. Պրբան կողմէ պաշտօն յանձնուեցաւ Բարիզի օսմանեան դեսպան Միւնիխ պէյի որ ուղղակի յարաբերութեան մտնէ Կեդրոնական գոմիթէին հետ: Իր բերած առաջարկութիւնները բաւական ըլլալէ շատ հեռու էին եւ հայ ազգին աւելնէ օրինաւոր բաղձանքներուն չէին համապատասխաներ. սակայն գոմիթէն այդ գործին մէջ շուրջ ուրիշ բան տեսնել բայց եթէ սուլթանին մէկ ճշմարիտ բարեկամացուութեան նշանը եւ անոր դիտաւորութիւնը ձեռնարկելու բարենորոգումներուն, որոնք արդէն բազմապատիկ խոստումներով ծանուցուած էին:

Վերջապէս, այս հաշտարար արամազրութեանց անկեղծութեանը ապացոյցը տալու համար, Միւնիխ պէյ յանուն սուլթանին կը խոստանար ընդհանուր ներում եւ Հայոց նկատմամբ ճնշողական եւ արգելիչ անօրինութեանց դադար: Գլխաւորապէս հաւաստիք կուտար թէ ջարդերուն առեւ զաղթած Հայերը պիտի կրնային իրենց տունը—տեղը վերադառնալ առանց ո եւ է կերպով նեղուելու ոտականութենէն ու իշխանութիւններէն:

Գոմիթէն ընդունեց այս առաջարկութիւնները:

Համաձայնութեան ծրագիրը Կ. Պոլիս հաղորդուելով, վաւերացաւ կայսերական իրատէով մը զոր Միւնիխ պէյ գոմիթէին հաղորդեց՝ իր կնիքովը կնքած:

Խօրապէս ճանշնալով հայ ազգին զգացումները, գոմիթէն վստահ էր թէ իրատէին պաշտօնապէս հրատարակուելէն եւ գործադրուելէն յետոյ բոլոր Հայերը իրենց ուղղամիտ աշակցութեամբը պիտի նպաստէին խաղաղամասն գործին:

Էւ սակայն, այդ իրատէին (որուն ամփոփումը պիտի գտնէ Ձեր Վսեմութիւնը այս թղթին կից) հաղորդուելէն ի վեր, ոչ մէկ գործ եկած է հաստատել սուլթանին արամազրութեանց իսկական անկեղծութիւնը, եւ իրատէն մեռեալ տառ մնացած է: Ասոր հակառակ, Հայերու նոր ու բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են Կ. Պոլիս եւ գաւառները:

Կեդրոնական գոմիթէն կը ցաւի որ սուլթանին նախաձեռնութեան արդիւնք եղող այս բանակցութիւնները վերջ ի վերջոյ այսպիսի ապարդիւն եզրակացութեան մը յանդամ են, մինչդեռ համաձայնութեան մը հետեւանքները այնքան բարեբաստիկ պիտի ըլլային թէ՛ սուլթանին եւ թէ՛ Հայերուն համար:

Իրատէին չգործադրուելը ամբողջ ազգին վրայ յոյժ ցաւալի ազդեցութիւն մը պիտի ընէ, եւ կայսերական կառավարութեան վրայ կը նետենք պատասխանատուութիւնը այն ծանր հետեւանքներուն զորոնք իր վարժանքը կրնայ առաջ բերել:

Ընդունեցէք, պարոն նախարար, մեր խորին ակնածութեան հաւաստիքը:

Հայ յեղափոխական
Կեդրոնական գումիթէ»

Իրատէին մէկ օրինակը կցուած էր այս յիշատակագրին, որ ո եւ է պատասխան շտապաւ:

Այս միջոցին Անատուլէն եւ Կ. Պոլսէն բիշ բիշ եկած լուրերը՝ կեդրոնական իշխանութեան չկամութիւնը կամ ակնհերեւ չարագործութիւնը երեւան կը բերէին:

Մէկ քանի մասնակի ներուձներ շնորհուած էին: Բայց բանտարկեալներուն շատը կը մնային Ափրիկեան Տրիպոլիտոյ, Ատանայի եւ Կ. Պոլսոյ ահուկի գնդաններուն մէջ: Ամենէն հանդարտ մարդիկը, որոնք իրատէին վստահելով թիւրքիա կը դառնային, ցամաք ելլելուն պէս կը ձերբակալուէին, եւ երաշխաւոր ներկայացնելու եւ այսպէս ճշմարիտ պատանդներ ոստիկանութեան ցոյց տալու պարտաւորութիւնը՝ անուանական կը դարձնէր դարձի յօդուածը:

Միւս կողմէ, մայիսի մէջ, 32 Հայ կը ձերբակալուէին Իզմիր եւ 52 Կ. Պոլիս. այս վերջիններուն յանցանքն էր հանգանակութիւն ըրած ըլլալ Քզիի գաւառակին սովեալներուն համար, ուր ինը գիւղ հրկիզուած էին 1895 հոկտեմբերին:

Վերջապէս, տեղական պզտիկ ջարդերը կը շարունակուէին գաւառները, եւ գոմիթէն լուր ունէր մայիս ամսուն կատարուած սպանութիւններուն եւ աւարառութեանց մասին, որոնք խաղաղական բանակցութեանց ատենը պատահած էին. — մայիս 13ին, Բաղէշի նահանգին Կիւզէլտէրէ գաւառակին մէջ, Սահակ գեղը, 11 հօգի սպանուած Քիւրտերուն ձեռքով. Խիզանի Պէյհուր գեղը, գիւղապետ Ազաժը կտոր կտոր եղած. Խարկոցի մէջ, Հայ մը սպաննուած. Վարդենիսի ճամբուն վրայ, Մոզաթ եւ Խարխում գեղէն երկու Հայ, որոնք շուկան կ'երթային, սպաննուած. Մշոյ վաշտին մէջ, Արտոնք գեղը, Պետրոս գիւղապետին եղբայրը սպաննուած. Բաղէշէն երեք ժամ հեռու, Ղուլթիկ գեղը, Միրզայի որդի Ֆարսօ հաւաքել կուտայ երեւելիները, անոնցմէ 60 ոսկի կ'անէ բռնի, յետոյ զանոնք կախել կուտայ գլխիվար եւ անոնց հետ կը սպաննէ հարիւրի չափ նուազ կարեւոր մարդիկ:

Քիչ յետոյ սուլթանը հաղորդել կուտար հեռագիր մը որուն մէջ կը յայտնէր թէ ապրիլ 15ի իրատէին խոստումները կատարած էր: Ի պատասխանի, գոմիթէն Միւնիթ պէյի միջոցաւ պաշտին առաջին քարտուղար Թահսին պէյի՝ այսինքն՝ իրօք Ապտիւլ-Համիտի ուղղեց ծանուցագիր մը յունիս 27 թուականով.

«Օսմանեան ղեսպան Միւնիթ պէյ Հայ կեդրոնական Գոմիթէին հաղորդեց կայսերական հեռագիր մը:

Այդ հեռագիրը կը հաստատէ թէ ապրիլ 15ի իրատէին խոստումները կատարուած են, այսինքն թէ ներուձ մը ամբողջովին գործադրուած է եւ թէ Կ. Պոլիս վարձած գաղթականները ո եւ է խոշտանգումի առարկայ եղած չեն:

Մինք արդարացի պատճառներ ունենալ կը կարծենք տարակուսելու ապրիլ 15ի իրատէին բովանդակ խոստումներուն լիուլի գործադրութեանը:

Կ'եր նորագոյն տեղեկութեանց համաձայն, Կ. Պոլիս ու գաւառները տակաւին բազմաթիւ աքսորեալներ ու կալանաւորներ կը գտնուին, ի միջի այլոց Մուրատ եւ իր ընկերները՝ Ափրիկեան Տրիպոլիտ, Հայկունի եւ իր ընկերները՝ Ատանա, Կէօվալէրեան՝ Ատանա, Վահան եւ Խաչիկ՝ Կ. Պոլիս, Հանրմեան եւ իր ընկերները՝ Կ. Պոլիս:

Մինչեւ այսօր, կայսերական իրատէին միակ դրական արդիւնքը եղած է Վանի բանտարկեալներուն մէկ մասին եւ Մէրսինի գործին մէջ մեղադրուած անձերուն արձակումը: Բաւական գոհունակութեամբ կ'արձանագրենք այս մասնակի արդիւնքը:

Բայց միւս կողմէ ո'չ միայն գաղթականներուն ո եւ է դիրութիւն տրուած չէ իրենց դարձին համար, հասցա նաև Կ. Պոլիս վարձուները բանտարկուած եւ ամենախիստ վարձուներ են թարկուած են: Այսպէս Պ. Տիգրան Արփիւարեան, որ իր խաղաղ բնաւորութեամբ ճանչցուած մարդ մըն է, Աղեքսանդրիայէն դարձին ամիս մը բանտարկուած է եւ պատրիարքին անձնական երաշխաւորութեանը վրայ միայն արձակուած է:

Ասից զատ, գաղթականներուն համար երաշխաւոր տալու խիստ պարտաւորութիւնը՝ անհնարին կը դարձնէ անոնց վարձը, որովհետեւ իրենց ամենէն մօտիկ ազգականներն ու բարեկամները չեն համարձակիր երաշխաւոր ըլլալ անոնց համար, վախնալով որ իրենք ալ չխոշտանգուին ոստիկանութեան:

Նոյնպէս, կ'իմանանք թէ Ռուսիա գաղթած Հայերը, որոնք փափաք յայտնած են թիւրքիա դառնալու, արգելքի կը հանդիպին տեղական իշխանութիւններէն, հակառակ իրատէին:

Այս իրողութեանց հանդէպ, եւ ի նկատ անսելով թիւրքիա վարձող Հայերուն բացարձակ անապահովութիւնը, Բարիզի կեդրոնական գոմիթէն չիրնար իր օտարաբնակ ու Բարիզաբնակ հայրենակիցներուն խորհուրդ տալ որ օսմանեան հօղը դառնան:

Հայ յեղափոխական
Կեդրոնական գումիթէ»

Ասոր վրայ Միւնիթ պէյ Կ. Պոլիս կանչուեցաւ. իր խօսքէն այնպէս կը հասկցուէր թէ իր ուղղակի միջնորդութեամբ կայսերական խոստումները գործադրութեան պիտի մտնէին: Երեւցածին նայելով, իր ըսածին չափ ազդեցութիւն չունէր հոն. թերեւս ալ սխալ հասկցած էր իր օգոստափառ տիրոջ խօսքերը՝ անոնց հասարակ ու ճշգրիտ իմաստովը, որպէս թէ պարզ անհատէ մը ելած ըլլային ատոնք, մինչդեռ կայսերական իմաստովը հասկնալու էր զանոնք:

Սեպտեմբեր 17ին Գոմիթէն, որ, ինք, ապրիլ 15ի բացորոշ իրատէն իր բուն իմաստովը կը մեկնէր միշտ, Կ. Պոլսէն վերագարձած պաշտօնական միջնորդին ձեռ-

քով տեսակ մը վերջնադիր զրկեց սրուն մէջ կը սպաննար խզել այդ անօգուտ բանակցութիւնը: Նախապտտրաստա- կան բանակցութիւնները եւ իրատէին հաղորդուիլը յիշելէ յետոյ, կ'ըսէր.

«Անկից ի վեր մէկ քանի ամիս անցած է, եւ սուլ- թանին անձամբ ստանձնած յանձնառութիւնները լիուլի գործադրուած չեն դեռ:

Քանի քանի անգամ, կեդրոնական Գոմիթէն Չեր վսեմութեան յիշեցուց իր տուած խօսքը եւ կրկնակի հա- ւաստիքները՝ յանուն Ն. Կ. Վ. Սուլթանին կնքուած յանձնառութեանց արագ գործադրութեանը մասին: Տասն անգամէ աւելի, գոմիթէն, Չեր վսեմութեան թախան- ձանքներուն վրայ, նորանոր պայմանաժամերու յօժարե- ցաւ. հակառակ այս երկարաձգումներուն, իրատէին բու- վանդակած խոստումները չիրագործուեցան:

Երբ Չեր վսեմութիւնը վերջերս Թիւրքիա կանչուե- ցաւ, մեզի ամենաբացարձ հաւաստիք տուաւ թէ իրատէն ընդհուպ պիտի գործադրուէր. զլիաւորապէս մեզի երաշ- խաւորեց՝ իր Բարիզ գառնալին տուալ՝ ազատ արձակու- մը բոլոր հայ բանտարկեալներուն որոնց ցանկը իրեն յանձնուած էր գոմիթէին կողմէ:

Անկից ի վեր մէկ քանի շաբաթ անցած է, առանց կացութեան մէջ ո եւ է գնահատելի փոփոխութեան:

Այսպէս, հակառակ իրատէին, հակառակ երաշխաւու- րութեանցը զորոնք կը թուէր տալ, հակառակ այնքան ան- զամ կրկնուած բերանացի խոստումներուն, ոչ միայն ամ- բող ու կատարեալ ներումը գործադրուած չէ, բայց եւ իրատէին վստահելով Թիւրքիա դարձող Հայերը բան- տարկուած են. ասկից զատ բազմաթիւ Հայեր ձեռքակալ- ուած են և դեռ կը ձեռքակալուին Կ. Պոլիս և գաւառները:

Գոմիթէին ընթացքը բոլոր բանակցութեանց ատեն, կատարելապէս ուղիղ եւ անկեղծ եղաւ: Բայց մէկ կողմէ իրատէին բովանդակ խոստումներուն անսահման երկարա- ձգումը, եւ միւս կողմէ մեր ազգակիցներուն զէմ ի գործ- ւորուած սիւզէմադիք հալածանքը Գոմիթէն հարկադրուած են տարակուսելու կայսերական կառավարութեան ուղղա- մտութեանը:

Արդարեւ ինչպէս կարելի է սրիշ կերպ բացատրել այսքան տարօրինակէս հակասական իրողութիւններ: Հոս, վեհապետի մը նախաձեռնութեանը վրայ, բանակցութիւն- ներ տեղի կ'ունենան, հաշտարար բովանդակութեամբ իրատէ մը կը հաղորդուի. անդին, Հայերը կը հալածեն եւ կը ջարդեն առանց ո եւ է բանաւոր պատճառի...

Երբ կեդրոնական գոմիթէն հաւանեցաւ ձեռնարկել բանակցութեանց որոնք սուլթանին նախաձեռնութեան արգիւնքն են, բնաւ նպատակ չունէր ասի մը բանտար- կեալներու արձակումը: Մեր շատ փոյթը չէ մէկ քանի անհատի ճակատագիրը: Ի հարկին կրնանք զոհել զանոնք սուրբ դատի մը, մեր ժողովրդին երջանկութիւնը: Եթէ հարկ է, կարելի է ջարդերուն երկու հարիւր հազար զոհե- րուն վրայ աւելցնել հարիւրի չափ բանտարկեալ զորոնք կառավարութիւնը կը յամառի՝ չի գիտցուիր ինչու՛ վար

դնել, ստնակոխ ընելով իր տուած խօսքը:

Ընդհանուր ներումը քիչ բան է, դրեթէ ոչինչ. եւ մէկ քանի հոգիի արձակումը կամ բանտը պահուիլը բնաւ չեն փոխեր զարշիւօրէն հարստահարուած ժողովրդի մը վի- ճակը: Սակայն, բանակցութեանց ընթացքին մէջ, կառա- վարութեան առաջարկութիւնը ընդունելով, գոմիթէն ու- ղեց բանտարկեալներուն արձակումը նկատել իբր նշան ճշմարիտ բարեկամեցողութեան մը եւ Ն. Կ. Վ. Սուլթա- նին զիտաւորութեանը՝ ապահովութիւնը վերահաստատե- լու և հայ ազգին վիճակը բարոքելու ձեռնարկելու: Գոմի- թէին կողմէն շատ համեստ պահանջում մը ցոյց կուտար այս իրական անկեղծութեան նշանը:

Ինչ պիտի կորսնցնէր կառավարութիւնը՝ ազատ ար- ձակելով քանի մը Հայեր, երբ իրեն այնքան դիրքին է կրկնապատիկը կամ տասնապատիկը բանտարկել տալ նորէն, եթէ ուզէ:

Իր խօսքը պահելով եւ խոստումները յարգելով, խո- հեմութեան եւ լաւ քաղաքականութեան գործ մը կատա- րած պիտի ըլլար: Հակառակը գործելով, ինչպէս ըրաւ, համաձայնութեան առիթ մը կորսնցուց՝ որուն նմանը մինչեւ ցարդ կրցած չէր ձեռք անցնել, հակառակ իր կրկնակի ձեղբրուն: Գոմիթէնները մինչեւ հիմա հաւանած չէին իրեն հետ յարաբերութեան մտնելու: Ներկայ առի- թէն՝ բարեբաստութեան եւ հանդարտութեան շրջան մը կրնար յառաջ գալ թէ՛ կառավարութեան եւ թէ՛ երկրին համար. եւ անուղղամտութեամբ ու կայսերական խոս- տումներուն անգործադրութեամբ, խզում մը առաջ կու- գայ որ կրնայ ավենածանր հետեւանքներ ունենալ. ատոր բոլոր պատասխանատուութիւնը՝ կառավարութեան և Երը- տըզ-Քէօշի շահախնդիր խորհրդականներուն վրայ կը ձգենք:

Սակայն, ի նկատ առնելով վերջնական խզման մը ծանր հետեւանքները, Գոմիթէն խզի պարտք կը համարի տասններկու օրուան վերջին պայմանաժամ մը նշանակել՝ ապրիլ 15ի իրատէով կնքուած յանձնառութեանց լիուլի գործադրութեանը համար:

Կը խնդրենք Չեր վսեմութեանն որ այս ծանուցագիրը Ն. Կ. Վ. Սուլթանին հաղորդէ, և եթէ, ներկայիս յանձ- նումէն տասներկու օր ետքը, իրատէն իր բովանդակու- թեամբ գործադրուած չէ, կը խնդրենք որ ամէն յարաբե- րութիւն խզուած նկատէք կայսերական կառավարութեան եւ կեդրոնական գոմիթէին միջեւ, որ այսուհետեւ իր յայ- տագրէն ի բաց պիտի թողու կառավարութեան հետ ո եւ է բանակցութեան սկզբունքն իսկ:

Հայ յեղափոխական կեդրոնական գումիթի

Վիլհելմ կայսեր ճամբորդութեան թուականը կը մօ- տենար. ուստի յիշեալ ծանուցագրին վրայ մեծ իրարան- ցում տիրեց պալատը, եւ, ժամանակ վստակելու համար, էնվլը պէյ փորձեց թելադրել գոմիթէին թէ քիչքիւսացու- րիւն մը եղած էր, մինչդեռ կայսերական նոր հեռագիր

մը, զոր Միւնիւր պէյ հաղորդեց, կ'ըսէր թէ իրատէին ի մաստը սխալ հասկցուած էր եւ թէ երբեք խնդիր չէր եղած ընդհանուր ներուժի, հապա անհատական շնորհներու:

Այնպէս շատ բուն պատասխան մը դրկուեցաւ (1898 սեպտեմբեր 28) Թահսին պէյի, կցելով Գեորգ Պիւլիպիւեանի եւ Էնվեր պէյի միջև փոխանակուած նամակներուն օրինակը որոնք ապագային անհնարին կը զարձնէին թիրիմացութեան տեսութիւնը:

«Բարիդի օսմանեան դեսպանին միջոցաւ հայ կեդրոնական գոմիթէին հաղորդուած կայսերական հեռագիրը մեզ խորապէս զարմացուց:

«Այս հեռագրէն կը հասկցուի թէ Գոմիթէն, այսքան երկար եւ այսքան դժուարին բանակցութիւններու ձեռնարկելով, աչքին առաջ ուրիշ բան չունէր բայց եթէ մէկ քանի հոգիի մասնաւոր շահը, եւ համաձայնութիւնը կը կը կնքէր՝ լոկ այդ մէկ քանի հոգիին ներուժը ձեռք բերելու համար: Բոլորովին աւելորդ է նորէն յիշեցնել այդ համաձայնութեան իսկական պայմանները. կը բաւէ մեզի յայտարարել թէ խնդիրը մէկ քանի անհատի շուրջը սահմանափակելը՝ յանդուգն ստուծին մըն է:

Գոմիթէն իր բոլոր արհամարհանքը կը յայտնէ այն անարգ մեքէնայութեանց համար որոնք այս ամբողջ գործին իւրաքանչիւր քայլին ի գործ դրուեցան: Ինք որոշած է, պաշտօնագրերը ի ձեռին, ճշմարտութիւնը վերահաստատել, եւ երեւան հանել բոլոր գրաւոր ու բերանացի, պաշտօնական ու կէս-պաշտօնական խոստումները զորոնք տուաւ: Բարիդի օսմանեան դեսպանը վկաներու առջեւ, որոնց մին, Բարիդի օսմանեան հիւպատոս Վէլի պէյ, այժմ էջ. Պոլիս կը գտնուի եւ կրնայ այս մասին ճշրիտ բացատրութիւններ տալ կառավարութեան:

Ասկից զատ, հայկական խնդրին մէջ շահ ունեցող պետութեանց ուղղուած մասնաւոր ծանուցադրի մը մէջ պիտի պարզէ յանուն էջ. Սուլթանին եղած խոստումներուն իսկական իմաստը եւ անոնց բացասական արդիւնքը. ու բանակցութեանց մանրամասնութիւնը իր կողմէ երուպական մամուլին պիտի հաղորդուի:

Եթէ հաւատարմացած են թէ Գոմիթէն լոկ անհատական շահերու կը հետամտէր եւ չնչին գոհացումներով պիտի շատանար, անավօթաբար ստած են եւ անարգօրէն խաբած են Պալատը:

Համաձայնութեան պայմանները՝ կայսերական հեռագրին մէջ յիշուածները չեն բնաւ, հապա անոնք որ կը գտնուին ո՛չ միայն կայսերական իրատէին եւ մեր ձեռքը գտնուած զանազան վաւերական պաշտօնագրերու մէջ, այլ եւ Էնվեր պէյի պաշտօնական թղթակցութեան ստորեւ յիշուած հատուածներուն մէջ:

Ասիկա միայն կը բաւէ ցոյց տալու թէ պալատին մէջ տարօրինակ սխալ գաղափար մը կազմած են հայ գոմիթէներուն մասին: Անոնք անձնական շահու ու եւ նպատակ չունին, իրենց անգամներուն մէջ իրենց ազգին վրեժով դատը գձուծ ու ամօթալի հաշիւներու զոհելու եւ ի-

րենց ազգին աւերակներուն վրայ իրենց բազը շինելու կարող մարդիկ չկան:

Գոմիթէները, ընդհակառակը, առաջուց զոհած են իրենց շահերը եւ իրենց կեանքը՝ իրենց հայրենակիցներուն ապահովութեանը եւ բարեկեցութեանը: Մեր անձը, մեր ազատութիւնը, մեր անձնական ապագան նշանակութիւն չունին մեզի համար, եւ ամէնէն նողկալի վատութիւնը պիտի նկատէինք ատոնցմով զբաղել ի վնաս ընդհանուր շահէն եւ երկրին անհրաժեշտ բարենորոգումներուն:

Կը յուսանք թէ տրուհետեւ պալատին մէջ ալ պիտի չխեղաթիւրեն մեր դիտաւորութիւնները, եւ ծաղրելի ու մեզի համար անպատուիչ կերպով մը չպիտի մեկնեն զանոնք:

Հայ յեղափոխական
Կեդրոնական գումիթէ»

Էնվեր պէյ փորձեց բանակցութիւնը վերսկսիլ ուրիշ ճամբով մը: Գոմիթէն, որ կը փափաքէր հաշտարար բոլոր միջոցները սպասել, նշանակեց իր անմիջական եւ անգիշտանելի պահանջումները:

Բարիդ, 2 հոկտ, 1898

«Թիրիմացութիւնը որուն կը վերագրուի ապրիլ 15ի կայսերական իրատէին անգործադրութիւնը, մեր կողմէն չէ, եւ կը պահանջենք որ այդ անարգ մեքենայութեանց մէջ մատ ունեցող անձերը ապաշայ բանակցութիւններէն դուրս թողուին:

Արդէն անգառնալի կերպով կը մերժենք ու եւ է բանակցութիւն, մինչեւ որ հայ բանասարկեալները, որոնց անունները վարը պիտի գտնէք, չարձակուին: Բացսորշապէս կ'ուզենք որ ուղղամտութեան այդ հաւաստիքը անմիջապէս տրուի մեզ, որովհետեւ գոմիթէին վարչական մարմինը շաբաթէ մը պիտի մեկնի Բարիդէն եւ խզումի որոշումը եւ պիտի չառնէ, եթէ հեռագրով իրեն իմաց չտրուի թէ այդ նախաշաւիղ խնդրանքին գոհացում տրուած է եւ թէ բանասարկեալները ազատ են:

Եթէ ասիկա ընդունուի, ամէն վստահութեան արժանի անձը որ պիտի նշանակուի Գոմիթէին հետ յարարութեան մտնելու համար, պէտք է հարկ եղած ուղղամտութիւնը ունենայ՝ բառ առ բառ բարձրագոյն շրջանակներուն հաղորդելու համար մեր փափաքածները:

Պէտք է շատ ճշգրիտ հրահանգներ եւ գործելու քիչ շատ ազատութիւն ունենայ:

Պէտք է կարելի եղածին չափ շուտ Բարիդ հասնի, որովհետեւ հեռուէն բանակցիլ կամ մենէ մին էջ. Պոլիս ղրկել անհնարին է:

Բոլորովին աւելորդ է ու եւ զեկոյց հաղորդել մեզի, եթէ բանասարկեալներուն ազատումը պիտի չընդունուի:

Հաճեցէք ընդունիլ եւայլն
Հայ յեղափոխական
Կեդրոնական գումիթէ»

Այս նամակը ո եւ է երկրի մութին չէր վերցնել: Սա կայն սուլթանը Էնվեր պէյի միջոցաւ հեռագիր մը զրկել աւել յետոյ որով սկզբունքով կ'ընդունէր եղած առաջարկները, առանց սակայն ո եւ է բանտարկեալ արձակած ըլլալու, եւ ժողով ձեւացնելով թէ Կ. Պոլսոյ մէջ ո եւ է բանակցութեան մը գաղափարը բացարձակապէս մերժուած էր, իրատէ մը հաննց որով Բարիզի գամբէին ներկայացուցիչը կը հրաւիրէր Կ. Պոլիս երթալ:

Էնվեր պէյի հրամանով հայ յեղափոխական կեդրոնական գամբէին ներկայացուցչին զրկուած ծանուցագիր.

Բերա, 12 հոկտ. 1898

«Վերջին հեռագրիս իբր շարունակութիւն, կուգամ ծանուցանել ձեզ՝ Բերայի կառավարիչ Էնվեր պէյի հրամանով թէ կայսերական իրատէսով հրաւիրուած էք անձամբ Կ. Պոլիս գալ, շարունակելու համար ընթացիկ բանակցութիւնները:

Նախատեսելով ահադին օգուտները զորոնք անշուշտ պիտի բաղէք՝ համակերպելով մեր օգոստոսիա տիրոջ իրատէին եւ ձեր ինդրանքները անձամբ ներկայացնելով առ ում անկ է, ջերմապէս խորհուրդ կուտամ ձեզի անշուշտ Կ. Պոլիս գալ:

Հաննցէք ուղղակի Էնվեր պէյին հեռագրով իմացնել ձեր գալուտին օրը, որպէս զի ամէն զիրութիւն արուի ձեզի:»

Հրուէրը, որուն տակ զիւրին էր տեսնել բաւական անձարակ կերպով լարուած թակարդ մը, 1898 հոկտեմբեր 18 թուակիր հեռագրով մը մերժուեցաւ իբր «լիբերալական մը», որուն ուշ կամ կանուխ պիտի պատասխանէր գործողութիւնը:

* *

Մինչեւ հիմա հայ յեղափոխականները, բուն պատիժներու պատրուակ չալու խղճահարութեամբ մը, զործելու ժամը ուշացուցին: Բայց առանց յիշելու իրենց ազգակիցներուն դէմ նոյն իսկ Կ. Պոլիս կատարուած կեղեքումները, օսմանեան կայսրութեան ասիական նահանգներուն մէջ տիրող վիճակը կրաւորական զիբք մը բռնելու չի հրաւիրեր զիրենք: 39,000 որբ եւ 18,000 որբուայրի կայ հոն: Ահռելի թշուառութիւն մը ի հարկէ յաջորդած է աշխատելու կարող զրեթէ բոլոր էրկամարդերուն անհետացմանը. ճարտարօրէն կազմակերպուած արհեստական սովը կը ծանրացնէ բնական սովը. միմիայն վանի նահանգին մէջ իբր հարիւր հազար հոգի կորուսելու վրայ են, ի չգոյէ հացի:

Տաւր տարի չանցած, այսպիսի դրութեան մը ենթարկուած ցեղը բնաջինջ պիտի ըլլայ:

Անխուսափելի կերպով, այդ ցեղը արտասահմանի մէջ ներկայացնող կորստի եւ բանիմաց մարդիկը, զորոնք շատոնց է որ ամէն ոք կը խաբէ, յուսահատական վրիժա-

կութիւններու պիտի մզուին: Ա՛լ իրենց փայլը պիտի չըլլայ թէ կը վտանգեն թէ ոչ ապահովութիւնը եւ խաղաղութիւնը եւրոպական ազգերուն, որոնք անդգայ հանդիսատես եղան 1894ի, 1895ի եւ 1896ի զարհուրելի կոտորածներուն եւ ներկայ թշուառութեան: Տարբեր բան եթէ պատահմամբ խելացի նախարար մը ընդհուպ միջամտէ յանուն մեծ պետութեանց մէկուն եւ՝ կրետէի պէս՝ լուծէ Հայաստանի ինչիրը, ժամանակին խնայելով հարաւոր մարդկային կեանքեր:

ԲԻԷՐ ՔԻՅՅԱՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԿԱՏՈՐԵՍԼ ԱՆԻՇԵԱՆՈՒԹԻՒՆ

Հայաստանի մէջ կացութիւնը այնքան ծանրացած է որ, վիեննայէն Տէյլի թեկէկրաֆի հեռագրուածին նայելով, շատ սաստիկ անձկութիւն կը պատճառէ քաղաքական շրջանակներուն մէջ:

Կ. Պոլսէն կը գրեն նոյն թերթին, «Անիշխանական վիճակ Հայաստանի մէջ» վերնագրով.

«Վանի եւ Բաղէշի շուրջը երկրին կացութիւնը օր օրի վատթարանալու վրայ է, որովհետեւ Համիտէ քիւրահեծելազօրքը, Հիւսէյին փաշայի հրամանատարութեան տակ, կատարելապէս տէր եղած է ամբողջ երկրին. թիւրք պաշտօնականները, թէ՛ քաղաքային եւ թէ՛ զինուորական, ամէն հեղինակութիւն կորսնցուցած են: Ո՛չ միայն Հայերը, այլ եւ ֆիւրտերուն հետ կապ չունեցող բոլոր բնակիչները կը տառապին: Նոյն իսկ թիւրք զօրքերը այդ վիճակին մէջ են, ըստ որում Հիւսէյին փաշա ձեռքը անցուցած է բոլոր արմտիքը, եւ ուզած գնովը կը ծախէ, ու զօրքերը հետեւաբար զրեթէ անօթի են: Տարակոյս չկայ թէ յեղափոխականները ներկայ ժամը շատ նպաստաւոր կը նկատեն խռովութեան մը համար, որպէս զի թաղաղութեան Համաժողովին ուշադրութիւնը հրաւիրեն թիւրքիոյ կացութեան վրայ, եւ ասիկա ինքնին կը բաւէ պատրաստ ըլլալու ամէն բանի որ կրնայ տեղի ունենալ թիւրքիոյ մէջ:»

* *

Մուշի եւ շրջականերու կոտորածներուն եւ թալանին վրայ թէեւ մանրամասն տեղեկութիւններ զեռ կը պակսին, բայց տարակոյս չկայ թէ ծանր աղէտներ պատահած են: Կ. Պոլսէն հետեւեալ կերպով կը պատմեն մեզ եղելու թիւնը.

«Կ. Պոլիս» լուր հասած էր թէ ֆիւրտերը Մասսնի

ժող հայ վանքի մը վանահայրը սպաննած են: Մուշէն եւ Բաղէշէն հասած նորագոյն տեղեկութիւններէ կը տեսնուի թէ այդ սպանութիւնը՝ շատ ծանր եղելութեանց մէկ միջազգայն է լուի: Ահաւասիկ ինչ պատահած է.

Ոստիկան զինուորներ Համիտիէ Քիւրտերու հետ Բաղէշի Սերունջ գիւղը կ'երթան ձերբակալելու համար Սերունջը անուն հայ յեղափոխական մը որ հոն ապաստանած է եղեր: Հակառակ զիւղին երեւելներուն տուած բոլոր երաշխաւորութեանցը թէ այդպիսի մարդ չկայ հոն, Քիւրտերն ու ոստիկան-զինուորները զիւղին վրայ կ'իջնան, սպաննելով, կոճովաւելով եւ 1000 զուլս արջառ հետերնին տանելով: Յետոյ ուրիշ հինգ զիւղ կը թալլեն ու կ'այրեն, եւ Մուշի ու Սասունի միջեւ Ս. Աղբիւր վանքը կ'երթան: Վանքը կը քանդեն, կրօնական բոլոր անօթներն ու զգեստները կ'առնեն կը տանին, եւ վանահայրն ու ուրիշ երկու քահանայ կը սպաննեն: Բաղէշի եւ Մուշի միջեւ գտնուած զիւղերուն բնակիչները, սարսափահար, լեռները ապաստանած են:»

Վանի անգլիական եւ ռուսական հիւպատոսները անմիջապէս Մուշ գացեր են քննութեան մը համար:

Այս առթիւ Անգլիոյ Խորհրդարանին մէջ հարցում մը եղաւ կառավարութեան թէ Անգլիա ալ պիտի հետեւի Ֆրանսայի եւ Ռուսիոյ որոնք ծանուցագրեր խրկեր են Դրան: Արտաքին գործերու Խորհրդականը պատասխանեց որ եթէ զէպքերը սուսուլին, կառավարութիւնը ինքն ալ միա պետութիւններուն պիտի գործակցի:

Միւս կողմէ Դուռը ոստիկանական հսկողութեամբ Պոլիս բերել կուտայ Մուշի կառավարիչ Բէքիւզ պէյը, իբր պատասխանատու կոտորածին ու թալանին: Սակայն սուլթանին նենգամիտ վարպետութիւնը շատ աչքի կը զարնէ: Մուշի կառավարիչը 1895ին պաշտօնանկ եղաւ, վասն զի չէր թոյլատրած Մուշի Հայոց կոտորածը: Եւր կառավարիչին պարտականութիւնը ուրեմն զժուած էր:

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսէն «Թայմզ»-ին կը հետագրեն թէ՛ Կրետէի իւրաւները Հայաստան փոխադրելու, և Կովկաս փախած գաղթական Հայերը Կրետէ տակելու ծրագիրը շատ հաճելի եղած է սուրբաւորին: Այս հայաստան խորհուրդը Կ. Պոլսոյ առաջ դեսպան Պ. Չիկոյիէֆի կը վերագրուի: Իսկ գերմանական քերթերը կը ծանուցանեն թէ սուրբաւորին է որ Ռուսիոյ դեսպանին առաջարկած է այդ դիւանագիտական ծրագիրը: Սակայն Արեւիկէն հասած յարեւոյն համեմատ ո՛չ Կրետէի Եւրոպիոս իշխանը, ո՛չ Արեւիկէն առաջական դեսպանը ո՛ր է է տեղեկութիւն ունին այսօրինակ խորհուրդի մը:

— «Տեյի Թեյիկրաֆ»-ի Կ. Պոլսոյ քղապետը կը հարգի Տատեան Արթիւն փաշային հրաժարականին յարը:

Վարչութեան ատենակալուր ժրեկվի գովիթիէն հետ մէկ երկու տարի բանակցելի յետոյ տեսնելով որ բարեկարգութեան ո՛ր է ծրագիր օտանկեան նախարարներուն ընդդիմադրութեանը կը բողոքի, որուն հետեւանքով ինքն ալ վարկարեկ կ'ըլլայ ազգին մէջ, պարտաւորուէր է հրաժարականը տալ:

— Պոլիս Սարափա քաղը հայ աղջկանց վարժարանին պատր գիշեր մը յայտարարութիւն մը փակցուէր է «Հայրենասիրաց յեղափոխական ընկերութիւն»-ի մը կողմէ: Հրատար մըն է Հայոց՝ զեկքի գիւղերով, շուտե՛ր 300,000 նահատակի վրեժը և փրկել հայութիւնը: Գործը ո՛ր է կարեւորութիւն չէ ունեցած է հասկցուէր է թէ... Քիւրտերուն գործն է: «Սարափոյ Հայերը, կ'ըստ Բիշքեր, պատիկ խանութպաններ են որոնք չեն ուզած Քիւրտեր գործածել իր սպասուէր էր քեռնակիր: Անեք ալ վրեժիկ շուտե՛ր համար այդպիսի յայտարարութիւն մը շինէր են, որպէս զի պատրուակ մը ըլլայ Հայերը ձերբակալելու, բանտարկելու, նեղելու:»

— Կ. Պոլիս կրկին կը յուզուի Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը, Խաւն Ժողովին պաշտօնակարգութեան երկամեայ շրջանին լրանալուն առիտ: Արդի կրօնական եւ ֆաշայական ժողովները ընտրուած են 1896ի վերջերը. երբ 1898ի վերջերը պահանջուէր որ հրաժարին, առարկութիւն եղաւ թէ երկամեայ շրջանը ըստ սահմանադրութեան մայիսին կ'աւարտի: Հիմակ մայիսն ալ եկաւ անցաւ: Յայտնի է թէ Ազգային ժողով գոռմարուէր է նոր ընտրութեան համար, ինչ որ ո՛չ սուրբաւորին ախորժելի է, ո՛չ պատրիարքին, ո՛չ Արթիւն փաշային: Եւ անա հիմակ ալ կ'աւարկեն, մինչեւ որ սահմանադրութիւնը չվերաքննուի սուրբաւոր մեր օճիքը բող չի տար: Բայց եթէ սահմանադրութիւնը վերաքննուի, միթէ նոր օրերը մը չի կրնար տրամադրել թէ Վարչութիւնը այնքան ատեն պաշտօն պիտի վարէ որքան ատեն որ սուրբաւոր ուզէ: Եւ ո՛վ է այդ վերաքննութիւնը ընելու իրաւունք ունեցողը:

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկին ղրկել առ

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND). LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ եւ 15ին: Բաժնեկին է Եւրոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 եւ վեցամսեայ 1 տոլար: